

Արցախի Խորհրդարանի Նախագահը Շնորհակալական Նամակ Յղած է ՀԱՆ-ի Ատենապետին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլեան նամակ մը յղած է ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհրդարանի ատենապետ Սեւակ Խաչատուրեանին՝ շնորհակալութիւն յայտնելով ան կարեւոր դերակատարութեան համար, որ ՀԱՆ ունեցաւ Քալիֆորնիոյ Խորհրդարանին կողմէ Արցախի անկախութեան ճանաչման ուղղութեամբ:

Նամակին մէջ ըստած է. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան՝ Արցախի Ազգային ժողովի եւ անձամբ իմ անունից երախտագիտութիւն եմ յայտնում Ձեզ՝ ԱՄՆ Քալիֆորնիա նահանգի օրէնսդիր մարմնի AJR 32 բանաձեւը համահեղինակելու եւ նրա ընդունման գործում էական ներդրում ունենալու համար:

«Այս բանաձեւը, որով հաւանութիւն է տրուում Արցախի շարունակական ջանքերին՝ զարգանալու որպէս ազատ ու անկախ պետութիւն եւ կոչ է արւում ԱՄՆ Նախագահին ու կոնգրեսին աջակցել Արցախի ինքնորոշման իրաւունքին ու անկախութեանը, կարեւոր ներդրում է Արցախի միջազգային ճանաչման գործընթացում:

«Համոզուած եմ, որ նոյն եռանդով կը շարունակէք Ձեր գործունէութիւնը եւ յետագայում ի շահ մեր համազգային նպատակների եւ իղձերի իրականացման, եւ յոյս ունեմ Ձեզ տեսնել Արցախում»:

Այս առթիւ Սեւակ Խաչատուրեան յայտարարեց, որ ինքզինք մեծապէս խոնարհ կ'զգայ Ազգային ժողովի նախագահ Ղուլեանի խօսքերուն առթիւ: «Այս առաջին օրինակիս հը որ, կը վաւերացուէր Քալիֆորնիոյ կողմէ՝ ճանչնալու համար Արցախի անկախութիւնը: Թէեւ այս մեծ յաջողութիւն մըն էր նահանգային մակարդակի վրայ, սակայն մեր պարտականութիւնն է եւ բարոյական պարտաւորութիւնը, շարունակելու մեր աշխատանքը՝ նմանատիպ օրինակներու ընդունման գծով: Ես կ'ողջունեմ ՀԱՆ-ի իմ գործընկերներու տարած աշխատանքը, որոնք ջանք չխնայեցին բանաձեւը առաջ մղելու ուղղութեամբ եւ ամենէն կարեւորը Խորհրդարանի անդամ Մայք Կաթոյին, որ իր քաջարի կեցուածքով Բանաձեւը մղեց յառաջ», այս առթիւ յայտարարեց ՀԱՆ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեան:

Ինչպէս ծանօթ է Մայիս 8-ին, Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանը իր ընդհանուր նիստի ընթացքին, 70 կողմ եւ 1 դէմ ձայներով վաւերացուց թիւ 32 բանաձեւը, որ կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներուն ճանչնալու՝ Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ պետութիւն եւ անոր ինքնորոշման եւ ժողովրդավարական անկախութեան իրաւունքը:

Բանաձեւը, որ ներկայացուած էր Խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի կողմէ, Քալիֆորնիան, իր 40 միլիոն բնակչութեամբ կը դարձնէ ամենաբազմամարդ պետական միաւորը, որ կը ճանչնայ Ղարաբաղի Անկախութիւնը:

Այսպիսով Քալիֆորնիան դարձաւ Ամերիկեան հինգերորդ նահանգը, որ պաշտօնապէս կը ճանչնար Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ պետութիւն:

Սերժ Սարգսեան Յաջորդ Տարուայ Ապրիլ 24-ին Թուրքիոյ Նախագահին Պաշտօնապէս Հրաւիրեց Հայաստան



Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի պետական յանձնաժողովի նիստ ընթացքին Երոյթ կ'ունենայ նախագահ Սերժ Սարգսեան

Մայիս 27-ին ելոյթ ունենալով Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի նիստին, Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան յաջորդ տարուայ Ապրիլ 24-ին Թուրքիոյ նախագահին պաշտօնապէս հրաւիրեց Հայաստան:

«Եթէ Թուրքիայի իշխանութիւններին հետաքրքրում է ճշմարտութիւնը, ուրեմն նրանք պէտք է գան Հայաստան եւ Ապրիլի 24-ին լինեն հայ ժողովրդի կողքին: Չեմ կարծում, թէ դրանից յետոյ նրանք արխիւներ այցելելու մասին միտք հնչեցնել կը կարողանան: Օգտուելով այս առիթից՝ պաշտօնապէս հրաւիրում եմ Թուրքիայի Նախագահին, ով էլ որ ընտրուի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ, այցելելու Հայաստան 2015 թուականի Ապրիլի 24-ին եւ առերեսուելու Հայոց ցեղասպանութեան պատմութեան խօսուն վկայութիւններին», ըսաւ Սերժ Սարգսեան:

Յիշեցնելով, որ պաշտօնական Անգարան կը շարունակէ խօսիլ պատմաբաններու յանձնաժողով ստեղծելու եւ արխիւները բանալու մասին՝ Սերժ Սարգսեան ընդգծեց. «Նախ եւ առաջ յայտնի է, որ Հայաստանի արխիւները միշտ բաց են եղել բոլոր այն հետազոտողների համար, ում հետաքրքրել է հարցի գիտական մասը: Բաց են եղել նաեւ գիտական հաստատութիւններում եւ թանգարաններում պահուող նիւթերը: Բայց ողջ հարցը նրանում է, որ Հայոց ցեղասպանութեան ճշմարտութեանն աւերեսուելու համար արխիւային աշխատանք ընդհանրապէս չի պահանջուում: Բաւական է մտնել ցանկացած հայկական տուն, ցանկացած ընտանիք եւ վկայութիւնները կը լցնեն ցանկացած ունկնդրի սիրտը: Բաւական է լինել Միջնադարի հարցերում Ապրիլի 24-ին եւ տեսնել, թէ ո՞րն է

այդ օրուայ խորհուրդը իւրաքանչիւր հայի համար՝ Հայաստանում եւ Սփիւռքում: Բաւական է գնալ Սփիւռքի ցանկացած համայնք եւ հարցնել՝ ինչպէ՞ս են ձեր նախնիները յայտնուել յայտեղ»:

Ակնարկելով Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրտողանի՝ այս տարի Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրուան նախորդած յայտարարութեան, Սերժ Սարգսեան ըսաւ, թէ փաստերու անաւարկելիութիւնն է որ կը ստիպէ Թուրքիոյ իշխանութիւններուն քայլեր ձեռնարկել. «Պաշտօնական Անգարան նոր



100-ամեակի միջոցառումներու խորհրդանիշը՝ «Յիշում եմ եւ պահանջում» խորագիրով

քայլեր է անում, որոնք երբեմն աննախադէպ են իրենց ձեւի մէջ, սակայն, ցաւօք, բովանդակութեամբ արտացոլում են Թուրքիայի հարիւրամեայ՝ նոյն ժխտողական քաղաքականութիւնը: Դրանք կրկնում են Թուրքական յայտնի դիրքորոշումները՝ փորձելով խեղաթիւրել պատմութիւնը, նոյն հարթութեան մէջ դնելով զոհին ու դահիճին»:

Բացի Թուրքիոյ ղեկավարէն Սերժ Սարգսեան արդէն իսկ շարք մը պետութիւններու ղեկավարներուն հրաւիրած է յաջորդ տարի Ապրիլի 24-ին այցելել Հայաստան:

Պետական յանձնաժողովի նիստի ընթացքին հրապարակուեցաւ պետական միջոցառումներու

«Երտողանի Ուղերձը Ցեղասպանութեան ճանաչման Դէմ Պայքարի Շրջագիծէն Ներս Էր». Յստակեցուցած է Դաւութօղլու

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեդ Դաւութօղլու յատակեցուցած է Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրտողանի՝ հայերուն ուղղուած յայտնի ուղերձի դրդապատճառները, յայտնելով որ այդ քայլը նպատակն ունէր պայքարիլ աշխարհի տարածքին Հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն դէմ:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթը, Իսթանպուլէն ընտրուած անկախ պատգամաւոր Իհսան Բարուշու վարչապետ Ռեջեփ Էրտողանի յայտնի ուղերձին հետ կապուած գրաւոր հարցադրում ուղարկած է խորհրդարան, որուն պատասխանած է նախարար Դաւութօղլու:

Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան ղեկավարը ըսած է

թէ, վարչապետ Ռեջեփ Էրտողանի ուղերձը Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարի ամբողջական ռազմավարութիւն է:

«Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարին մէջ պիտի աշխատինք դիւանագիտականէն մինչեւ իրաւական, հասարակականէն մինչեւ գիտական ոլորտներով եւ թրքական սփիւռքի մասնակցութեամբ: Վարչապետ էրտողանի Ապրիլի 23-ի ուղերձը այդ ամբողջական ռազմավարութեան մէկ մասն է», - ըսած է Դաւութօղլու:

Թուրքիոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով վարչապետը Ապրիլի 24-ի նախօրեակին ցաւակցութիւն յայտնած էր 1915-ի զոհերուն, սակայն իր յայտարարութեան մէջ կրկին չէր հեռացած պաշտօնական ժխտողական թէզերէն:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Խորհրդարանական բարոյականութեան էությունցիայի պերճանքն ու թշուառութիւնը

ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՀՀԿ համագումարում նախագահ Սերժ Սարգսեանը յայտարարել է, թէ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ թշնամանք չկայ, չնայած նրանց միջեւ ընթացող բանավէճերի լուսաբանումից հասարակութիւնը նման տպաւորութիւն է ստանում:

Մեծ հաշուով, նախագահն, իհարկէ, ասում է ճշմարտութիւնը. երբ գործ եւ ունենում կլիենտների հետ, խօսքը կարող է գնալ ոչ թէ թշնամութեան մասին, այլ ընդամէնը մատուցող ծառայութեան եւ այդ ծառայութիւնից օգուտելու ձեւերի: Իշխանութիւնն ու միւս ուժերի մեծ մասը, տակտիկական նկատառումներով, պարզապէս ընտրել են «կոխ-կոխ» խաղալու տարբերակը: Բայց նախագահի յայտարարութեան մէջ հակառակ ոչ թէ դա էր, այլ այն փաստը, որ հերթական անգամ իրականութիւնը խեղաթիւրելու մեղքը բարդում է լուսաբանման, այսինքն լրագրողական աշխատանքի որակի վրայ:

Սա նոր թէ՛զ է, իհարկէ: Դեռ մէկ տարի առաջ հանրապետութեան նախագահը շատ պարզ յայտարարեց, որ երկրում գաղջ մթնոլորտի առկայութեան պատճառը հենց իրականութեան «գաղջալին» լուսաբանումն է լրատուամիջոցների կողմից: Աւելին, դեռ այն ժամանակ պարզուեց, որ Հայաստանում անկիրթ, գոեհիկ, ցինիկ պաշտօնեաներ ու պատգամաւորներ չկան, որ դրանք ընդամէնը ոչ պրոֆեսիոնալ լրագրողների երեւակայութեան արդիւնքն են, ովքեր պարզապէս չգիտեն ում հետ ինչպէս չարաբերուել, ինչպէս խօսել:

Եթէ մինչեւ նախագահի այս յայտարարութիւններն իշխանութեան օլիգարխիկ ու կրիսակրիմիալ շրջանակները գոնէ հարկ էին համարում խօսել, դրանից յետոյ արդէն լրագրողներին անգամ այդ «պատուին» արժանացնել չեն ցանկանում: Դեռ մի քանի մետրից ֆիքսելով նրանց սեւեռուած հայեացքներն ու մօտեցող քայլերը, առանց ձեւեր թափելու, հայհոյում են, վիրաւորում, նուաստացնում: Իհարկէ, բանը դեռ հարուածներին եւ սպառնալիքները գործնականում իրականացնելուն չի հասել, բայց էությունցիայն, ինչպէս յայտնի է, անդադար պրոցես է եւ բացարձակապէս չի կարելի բացառել, որ այդ տաբուն եւս առաջիկայում յաջողութեամբ կը չարթնանա:

Մանաւանդ որ նման վերաբերմունքը թերուաներից վիրուսի նման արդէն անցել է իրենց շուրջը քիչ թէ շատ ինտելեկտուալ, այսպէս կոչուած մակարդակով պաշտօնատար անձանց իմիջ ստեղծած հատուածներին: Բացարձակապէս զարմանալի է, որ էթիկայի տարրական կանոնները պահպանելու եւ տարրական դաստիարակուածութիւն դրսեւորելու առումով «պրոգրեսը» իշխանութեան ներսում հենց այսպիսի դեգրադացիոն ուղղութեամբ է ընթանում, որովհետեւ արդէն երկու տարի է՝ դա ինստիտուցիոնալ հիմքերի վրայ է դրուել Աժ էթիկայի յանձնաժողով:

Վի տեսքով:

Լրագրողներին վիրաւորելու յայտնի դէպքի կապակցութեամբ այսօր այդ յանձնաժողովին պէտք է բացատրութիւններ տար Աժ պատգամաւոր Առաքել Մովսիսեանը, նոյն ինքը՝ Շմայսը: Բայց նա յանձնաժողովի նիստին չէր ներկայացել: Նա պարզապէս թքած ունէր թէ յանձնաժողովի, եւ թէ վերջինիս կողմից կայացուելիք որոշման վրայ, եթէ իհարկէ, նման որոշում լինի առհասարակ: Այս յանձնաժողովը մասնագիտացել է բացառապէս մէկ բանում. այս կամ այն պատգամաւորի հասցէին հնչած մեղադրանքները եւ դրանք հիմնադրող փաստերը «Չրելու», այդ պատգամաւորներին ներողութիւն խնդրելու ծանր բեռից ազատելու հարցում: Գրեթէ կասկած չկայ, որ նոյն պրակտիկական կիրառուելու է նաեւ Շմայսին կարգի հրաւիրելուն ուղղուած՝ լրագրողների ներկայացրած դիմումի պարագայում:

Որեւէ յանձնաժողով ոչ Առաքել Մովսիսեանին, ոչ էլ նրա «կալիբրի» որեւէ պատգամաւորի կարգի հրաւիրել չի կարող սկզբունքնօրէն, որովհետեւ, ինչպէս արդէն բոլորն են հասկացել իշխանութեան գլխի՝ նախագահի մեկնաբանութիւնից, նման պատգամաւորների, պաշտօնեաների խնդիր չկայ. կայ ոչ պրոֆեսիոնալ լրագրողների խնդիր: Հետեւաբար բոլորովին տարօրինակ չի լինի, եթէ ասենք, էթիկայի սոյն յանձնաժողովը յանկարծ որոշի, որ ոչ թէ Առաքել Մովսիսեանը, Մհեր Սեդրակեանը, Շուշան Պետրոսեանը եւ այլք պէտք է ներողութիւն խնդրեն լրագրողներից իրենց վարքուբարքի համար, այլ լրագրողները՝ նրանցից՝ ոչ ճիշտ քայլուածքով կամ դէմքի ոչ ճիշտ արտայայտութեամբ նրանց մօտենալու, անհանգստացնելու համար:

Նման ընկալումների դաշտից էթիկայի յանձնաժողովը դուրս գալ չի կարող նաեւ այն պատճառով, որ հայաստանեան պաշտօնատարից մտած բարոյաէթիկական նորմերը սկսում ու աւարտում են «ախպերականութեամբ» եւ «ախպերաբանութեամբ», որոնք որեւէ կանոնակարգում, որեւէ օրէնքում գտնել, բնականաբար, հնարաւոր է: Եւ ստացուած է, որ յանձնաժողովին իր անգործութեամբ, իրողութիւններն ու փաստերն աղաւաղելու հմտութեամբ ոչ թէ կաշկանդում է պատգամաւորներին, այլ ազատում նրանց ձեռքերն ու լեզուներն ու նրանց բոլոր գործողութիւնները, ինչի արդիւնքում այդ դրսեւորումները նուազելու փոխարէն աւելի յաճախակի ու աւելի ազդեալ են դառնում:

Այս յանձնաժողովի հետ կապուած միակ անհասկանալի այն է, որ խորհրդարանական միւս, այսպէս կոչուած ոչ իշխանական ուժերը, բացառութեամբ ՀԱԿ-ի, շարունակում են իրենց մասնակցութիւնը բերել այդ խեղկատակութեանը: Գուցէ դրանով նրանք էլ իրենց համար են ապագայի կտրուկութեան «ֆորա» ապահովում: Մեծ աշխարհ է, մի օր կարող է պէտք գալ... ՀԵՏԲ

Սերժ Սարգսեանը յետաձգեց

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Մայիսի 24-ին տեղի ունեցած ՀՀԿ 15-րդ համագումարում ունեցած ելույթում Սերժ Սարգսեանը մի քանի «ծրագրային» ուղերձ է ցղել:

Նախեւառաջ դա վերաբերուում էր եւրասիական ինտեգրմանը: Սերժ Սարգսեանն ասել է, որ Մաքսային միութեանը Հայաստանի անդամակցումը մտնում է աւարտական փուլ: Եւրոպական եւ այլ միութիւնների վերաբերեալ նա ընդհանրապէս ոչինչ չի ասել, իսկ դա նշանակում է, որ որեւէ միութեանը Հայաստանի ինտեգրումը յետաձգում է (եթէ իհարկէ դա հանրութեան զգօնութիւնը թուլացնելու եւ Մայիսի 29-ին Եւրասիական միութեան պայմանագիրը ստորագրելու քայլ է):

Ըստ ամենայնի, յետաձգում է

դաքական դիրքերը: Սերժ Սարգսեանը ՀՀԿ-ին առաջարկում է աշխատել քաղաքացիական հասարակութեան հետ, նոր գաղափարներ ստանալ «ներքեւից», կառուցել քաղաքացիական պլատֆորմ:

Սերժ Սարգսեանի ելույթը թույլ է տալիս ուրուագծել Հայաստանում առաջիկայ 2-3 տարիների բաւական բարդ նկարը:

Հայաստանը պէտք է գոյատեւի մինչեւ չաջորդ ընտրափուլ՝ առանց զարգացման, առանց կտրուկ փոփոխութիւնների:

Ներկայիս կառավարութիւնը կը փորձի մի քիչ լայն բացել տալ ձեռնարկատէրերի գրպանն ու փիւռքից ինչ որ գումարներ ներգրաւել գոյատեւելու համար: Իշխանութիւնն ու ընդդիմութիւնը համագործակցելու են, ստեղծելով «դասական երկբեւեռ համակարգ»: Քիչ ինչ չէգոքացուած են արտա-

Սերժ Սարգսեանը յայտարարելով, որ «մինչ ընտրութիւնները դեռ պէտք է ապրել ու աշխատել», փաստացի բացառել է արտահերթ ընտրութիւնների հնարաւորութիւնը

նաեւ դարաբաղեան կարգաւորումը. Սերժ Սարգսեանի ելույթում ակնարկ կար այն մասին, որ Ատրպէյճանը չի ընդունում սեփական պարտութիւնը եւ փորձում է խափանել բանակցութիւնները:

Ելույթում խօսք չկար «մադրիդեան» եւ այլ սկզբունքների, մօտակայ կարգաւորման մասին, խօսք չկար նաեւ այն մասին, որ Հայաստանը պատրաստ է փոխզիջումների: Դա նշանակում է, որ խափանուել է Հայաստանի համար վտանգաւոր կարգաւորման սցենարը, որը պատրաստել էր Ռուսաստանը Մաքսային միութեանն անդամակցելու «համատեքստում»:

Սերժ Սարգսեանի ելույթում ակնարկ կար նաեւ այն մասին, որ ընդդիմութիւնը պատրաստուած է ընտրութիւնների:

Նա ընդգծել է, որ դա 2017-18 թթ. ընտրութիւններն են, թէեւ ընդդիմութիւնը նկատի ունէր արտահերթ ընտրութիւնները: Սերժ Սարգսեանը յայտարարելով, որ «մինչ ընտրութիւնները դեռ պէտք է ապրել ու աշխատել», փաստացի բացառել է արտահերթ ընտրութիւնների հնարաւորութիւնը: Նա բոլոր քաղաքական ուժերին հասկացնել է տուել, որ հրաժարականի, խորհրդարանը ցրելու որեւէ մոտիւ չունի, եւ ընտրութիւնները կը լինեն ժամկէտին:

Սերժ Սարգսեանը չի ասել, թէ ինչ է մտադիր անել ընտրութիւններից յետոյ: Աւելի վաղ նա յայտարարել էր, որ չի առաջադրուելու նախագահի պաշտօնին եւ չի յաւակնելու վարչապետի պաշտօնին, եթէ երկիրը դառնայ խորհրդարանական հանրապետութիւն: Եւ այն, որ նա բոլոր ուժերը նետում է ՀՀԿ-ն ուժեղացնելուն, նշանակում է, որ շեշտադրումները լինելու են երկրի կառավարման համակարգի փոփոխութիւնների վրայ:

Կայ եւս մէկ բան, որի մասին Սերժ Սարգսեանը չի խօսել՝ որ ՀՀԿ-ն մտադիր է ընդդիմութիւնից «խլել» քաղաքացիական նախաձեռնութիւնը: Քաղաքացիական վերջին մի քանի նախաձեռնութիւններին աջակցում էին ընդդիմադիր ուժերը, որը թույլ էր տալիս նրանց ամրապնդել սեփական քա-

ջին քաղաքական խնդիրները՝ դարաբաղեան կարգաւորումը եւ եւրասիական ինտեգրումը սառեցուել են:

Հայաստանն ապահովել է «կայունութիւն», աւելի ճիշտ՝ ճահճացում առաջիկայ 2-3 տարիների համար: Որքա՞ն մարդ այդ ընթացքում կը հեռանայ երկրից, նրանցից որքա՞նը կը ստանայ ուսակական անձնագիր, որքա՞ն մարդ կը գոհուի առաջին գծում, դիպուկահարների կրակոցներից:

Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐՔ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐՔ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ
SOPƏ. ՄՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Յրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալայնագործն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նաւասարդ Արքեպիսկոպոս Կճոյեան. «ՕՖշորային Թեման Փակուած Է»

Հանրապետական կուսակցութեան համագումարին, ինչպէս միշտ, ներկայ էր Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանը: Թէ ինչո՞ւ է ամէն անգամ Կճոյեանը ներկայ իշխող կուսակցութեան համագումարին, ինքն անձամբ այս կերպ է մեկնաբանում. «Օրհնում եմ»:

Դիտարկմանը, թէ ՀՀ-ի համար պարբերաբար աղօթում էք, բայց կուսակցութիւնն այդպէս էլ յաջողութիւն չի արձանագրում, արքեպիսկոպոս Կճոյեանը պատասխանեց. «Ես աղօթում եմ նաեւ Ձեզ համար, նոյնիսկ ձեզ համար, որովհետեւ դուք փորձում էք ինքնադրսեւորուել այլոց հաշուին: Խնդիր չէք բարձրացնում. Խնդիրները վերահանէք, բամբասանքով էք զբաղւում: Դուք չէք աղօթում Չերմեռանդօրէն, եթէ հաւատք ունենաք, կ'օգնի, եթէ ոչ՝ չէ: Բոլոր մարդկանց համար եմ ասում»:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ իր անունը կապւում է ՀՀ-ի հետ, թէեւ ինքը կուսակցական չէ, Կճոյեանը նշեց, որ Հանրապետական կուսակցութիւնը ազգային պահպանողական կուսակցութիւն է, ապա նշեց, որ ինքը չի կարող դառնալ ՀՀ-ի անդամ. «Ես կուսակցական չեմ կարող դառնալ, ես արդէն եմ՝ էջմիածին միաբանութեան անդամ»:

Հարցին, թէ հնարաւոր է գործող վարչապետ Յովիկ Աբրահամեանի հետ նոյն կերպ մտերիմ յարաբերութիւններ ունէ՞ք, որքան նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ, Կճոյեանը պատասխանեց. «Յովիկ Աբրահամեանը



Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեան

նր, որդին՝ Արգամը, Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին վերանորոգել են Մխչեան գիւղում, ինքը կառուցում է Արտաշատի սուրբ Յովհաննէս եկեղեցին, որի օծումը դեռ չի եղել, ի՞նչ պիտի ասեմ ես, միայն դրական»:

Անդրադառնալով օֆշորային պատմութեանը Կճոյեանը նշեց, թէ իր համար այդ թեման փակ է ու եղել է փակուած: «Օֆշորային պատմութեամբ ես չեմ զբաղւում, իրականացնում եմ զբաղում: Ինձ համար այդ թեման միշտ փակուած է եղել, որովհետեւ ես օֆշորային սկանդալի հետ կապ չունեմ: Այ, ձեզ համար այդ թեման փակուած չէ: Ինչո՞ւ, պատասխանը դուք կ'իմանաք: Քանի անգամ կարելի է նոյն բանը ասել, դուք փնտռում էք սենսացիաներ, ճիշդը չէք ուզում իմանալ, որ ասում եմ՝ չէք ուզում լսել: Դուք ճշմարտութիւն չէք փնտռում, սենսացիաներ եք փնտռում»:

Լրագրողական Կազմակերպութիւնը Սպառնալիք Ե Տեսնում

Ինֆորմացիայի Ազատութեան Կենտրոնը մտահոգութիւն է յայտնել ՀՀ գլխաւոր դատախազութեան՝ 2014թ.-ի Մայիսի 22-ին տարածած «Նախաքննական տուեալների հրապարակումը քրէօրէն պատժելի է» հաղորդագրութեան վերաբերեալ:

Կազմակերպութիւնը գտնում է, որ այն խիստ խնդրաշարժիչ է, չի բխում լրատուամիջոցների ազատութեան եւ լրատուութեան աղբիւրի գաղտնիութեան իրաւունքներից, վտանգի տակ է դնում իւրաքանչիւր լրագրողի մասնագիտական պատշաճ գործունէութեան իրականացումը, արդիւնքում նաեւ՝ հասարակութեան տեղեկութիւն ստանալու իրաւունքը: Յիշեցնենք՝ վերոյիշեալ հաղորդագրութեան մէջ ասում է, որ

ՀՀ գլխաւոր դատախազի յանձնարարութեամբ, հսկողութիւն իրականացնող դատախազները, զանգուածային լրատուութեան միջոցներում նախնական քննութեան ընթացքում ձեռք բերուած ապացույցների կամ ստուգման ենթակայ հանգամանքների վերաբերեալ հրապարակումների իւրաքանչիւր դէպքում, ձեռնարկելու են օրէնքով սահմանուած քրէադատավարական ներգործութեան միջոցներ:

Ինֆորմացիայի Ազատութեան Կենտրոնը գտնում է, որ ՀՀ գլխաւոր դատախազութեան հաղորդագրութիւնն ընկալում է ոչ թէ որպէս օրինակամութեան ապահովման ուղղուած գործողութիւն, այլ ուղղակի սպառնալիք ընդդէմ լրագրողների եւ լրատուամիջոցների մասնագիտական գործունէութեան իրականացման:

Սպառնալիքներ Սէֆիլեանի Եւ Կնոջ Դէմ

Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, «Նախախորհրդարանի» քարտուղարութեան համակարգող Ժիրայր Սէֆիլեանը ԱԱԾ աշխատակիցների կողմից իր հասցէին հնչեցուած սպառնալիքներն առայժմ չի մեկնաբանում, սպասում է ԱԱԾ ղեկավարի մեկնաբանութեանը:

Աւելի վաղ Նախախորհրդարանը տեղեկութիւն էր տարածել, ըստ որի, ՀՀ կառավարութեանն առընթեր Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մի բարձրաստիճանի ներկայացուցիչ միջոցով պաշտօնապէս Ժիրայր Սէֆիլեանին ուղղուած սպառնալիք է փոխանցել, թէ վերջինս Քեսաբի ազատագրման նպատակով

այնտեղ ազատամարտիկներ է ուղարկում, եւ եթէ մէկ անգամ էլ փորձի նման քայլ կատարել, նրան կ'արտաքսեն Հայաստանից:

Նախախորհրդարանի տարածած հաղորդագրութեան համաձայն՝ Մայիսի 26-ին, երբ ոստիկանները մօտեցել էին «ՍԱՍ» սուպերմարկետի մօտ կայանած՝ Սէֆիլեանի կնոջ մեքենային եւ ստիպել էին պրկել «Ձեռքերդ դուրս մեր գրպանից» մեքենայի վրայ փակցուած պիտակը, Նախոր Սէֆիլեանը դիմադրել էր, ոստիկանները նրան քաշքշել էին, ապա լսելով նրա արեւմտահայերէն խօսքը՝ ստել. «Թող զեա Հայաստանից, եթէ սո՛ք քեզ դուր էի գալիս», այնուհետեւ երեք մեքենայով երկար հետապնդել էին նրան:

ՀՅԴ-ՍԴՀԿ Միջվարչային Հանդիպում Երեւանում

Մայիսի 26-ին, տեղի ունեցաւ հանդիպում ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի միջեւ: Հանդիպմանը երկու կողմերից մասնակցում էին ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանը, վարչութեան անդամներ Վազգէն Մեսրոպեանը, Դմիտրի Մարտիրոսեանը, վարչազուտ Եղիազարեանը, ինչպէս նաեւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը, ԳՄ անդամներ՝ Աղուան Վարդանեանն ու Լիլիթ Գալստեանը:

Հանդիպման ժամանակ երկու աւանդական կուսակցութիւնների

ներկայացուցիչները քննարկեցին Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը, Միւրիայի հայ համայնքի եւ Հայաստանում ապաստանած սիրիահայերի խնդիրները:

Անդրադարձ եղաւ նաեւ առաջիկայում սպասուող սահմանադրական բարեփոխումներին: Թէ՛ ՄԴՀԿ եւ թէ՛ ՀՅԴ ներկայացուցիչները նշեցին, որ իրենք կողմ են հարիւր տոկոս համամասնական ընտրակարգին եւ խորհրդարանական կառավարման համակարգին: Կողմերը պայմանաւորուեցին պարբերաբար հանդիպել եւ քննարկել երկկողմ նշանակութիւն ունեցող կարեւորագոյն հարցերը:

Վերահսկիչ Պալատը Կարող Է Տրուել Ընդդիմութեանը

ՀՀ կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը դէմ չէ, որ ընդդիմութիւնը ունենայ վերահսկողական լծակներ: Այսօր էլ ընդդիմութիւնն, ըստ նրա, վերահսկում է իշխանութեանը, 10 տարի առաջ նման բան հնարաւոր չէր. «10 տարի առաջ դուք չէիք կարող պատկերացնել, որ ընդդիմութիւնը ներկայացնող գոնէ մէկ անձ լինի որեւէ ընտրական յանձնաժողովի նախագահ կամ տեղակալ կամ քարտուղար, 10 տարի առաջ դուք չէիք կարող գտնել ընդդիմութեան մի որեւէ ներկայացուցիչ, որը լինէր ԱԺ յանձնաժողովի նախագահ կամ տեղակալ»: Իսկ արդեօք ընդդիմութիւնը դրա համար պէտք է շնորհակալ լինի. «Եւ չպէտք է շնորհակալ լինի»՝ պատասխանում է Դաւիթ Յարութիւնեանը:

Պարոն Յարութիւնեանը չի բացառում, որ կարող է եւ վերահսկիչ պալատը տրուել ընդդիմութեանը, կան երկրներ, որտեղ

նման փորձ արել են, բայց հարց է՝ պատրաստ են այս փուլում նման քայլի. «Մենք դեռեւս չենք կարողացել կայացնել մեր քաղաքական դաշտը»:

Հանրապետական պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը երկրներ գիտի, որտեղ վերահսկիչ պալատի նախագահի պաշտօնը ընդդիմադիր գործիչ է զբաղեցնում: Բայց Հայաստանի ընդդիմութիւնը թող իր մէջ որոշի, թէ իրենցից յատկապէս ո՞ր քաղաքական ուժն է ուզում վերցնել այդ պաշտօնը. «Ազգային ժողովում կայ 4-5 խմբակցութիւն այլեւս, ովքեր իրենց հռչակել են ԱԺ կանոնակարգի դրոյթներին համապատասխան որպէս ընդդիմադիր դաշտում գործող քաղաքական ուժ կամ ընդդիմութիւն»:

Բացի դրանից, ըստ հանրապետական պատգամաւորի, ընդդիմութիւնը պէտք է պատրաստ լինի նման պաշտօն եւ վերահսկողական գործառնոյթներով այլ պաշտօններ զբաղեցնելուն:

Վոլոդիա Աւետիսեանի Փաստաբանը Կը Դիմի ՀՀ Արդարադատութեան Խորհուրդ

Խարդախութեան մէջ մեղադրուած ու ազատագրուած Վոլոդիա Աւետիսեանի պաշտպան Արա Զաքարեանը բողոք-դիմում է պատրաստել ուղղուած Արդարադատութեան Խորհրդին:

Պաշտպանը պնդում է, որ դատաւոր Լեւոն Աւետիսեանը համակողմանի ու հաւասարակշռուած դատավարութիւն չի անցկացնում եւ խախտելով միջազգային ու տեղական իրաւական նորմերը՝ շարունակում է կալանքի տակ պահել ազատամարտիկին:

Հարաբարեան պատերազմի վետերան, պաշտօնաթող զնդապետ Վոլոդիա Աւետիսեանն արդէն կալանքի տակ է 9 ամիս:

Հերթական դատական նիստին ներկայ Աւետիսեանի մարտական ընկերները, հարազատներն ու աջակիցները դատախազ Հենրիկ Պապիկեանին դիմաւորեցին սուլոցներով, գոռում-գոչիւններով:

Աւետիսեանի պաշտպան Զաքարեանը, յայտնելով դատաւորի դէմ Արդարադատութեան Խորհուրդը դիմելու մտադրութեան մասին, եւս անգամ միջնորդութեամբ բացարկ յայտնեց դատաւոր Լեւոն Աւետիսեանին:

պաշտպանի մտադրութիւնը՝ իր դէմ բողոքելու վերաբերեալ, եւ որոշ ժամանակ անց մերժեց բացարկ յայտնելու մասին միջնորդութիւնը: Սա նրա դէմ բերուած երրորդ միջնորդութիւնն էր: Զաքարեանը անցած դատական նիստերին եւս նման միջնորդութիւն էր արել եւ մերժում ստացել:

Այս մերժումից յետոյ պաշտպան Զաքարեանը մէկ այլ միջնորդութիւն ներկայացրեց՝ պահանջեց ազատ արձակել Աւետիսեանին աւելի քան 50.000 դոլար արժողութեամբ գրաւի դիմաց: Նա նշեց, որ նման ծանրութեան յանցագործութիւնների դէպքում եւրոպական նախադէպերով եւրոպական դատարանը պահանջում է ազատ արձակել մեղադրեալին յատկապէս, երբ նա պատրաստ է գրաւ վճարել իր ազատ արձակման դիմաց:

Դատաւորը այս միջնորդութեան վերաբերեալ իր որոշումը կը հրապարակի յաջորդ դատական նիստին: Նշենք, որ նախորդ նիստերին նա Աւետիսեանին կալանքի տակ պահելը մի դէպքում հիմնաւորել էր նրանով, որ պաշտօնաթող զնդապետ կարող է վկաների վրայ ճնշումներ գործադրել, միւս դէպքում՝ որ կարող է խուսափել դատաքննութիւնից:

ԼՈՒՐԵՐ

Սէյրան Օհանեանը Չի Քննադատում Ռուս-Ադրբեջանական Զերթական Գործարքը



T-90S հրասայլեր ռոմեցմէ հարիւր հատ Ռուսաստան մատակարարած է Պաֆունիին

«Ռուսաստանն իրաւունք ունի իր պլանները համաձայն ինքնուրոյն ռազմատեխնիկական քաղաքականութիւն իրականացնել»:

Միեւնոյն ժամանակ Սէյրան Օհանեանը նշել է, թէ այդ համագործակցութիւնը չի խաթարում հաւասարակշռութեանը սահմանների վրայ:

Ռուսաստանի Ռազմատեխնիկական համագործակցութեան դաշնային ծառայութեան ղեկավար Կոնստանտին Բիրիւլինը անցած շաբաթ յայտնել էր, որ Մոսկուան աւարտել է Ադրբեջանին 100 հատ T-90S տանկերի մատակարարումը, եւ հնարաւոր էր համարել նոյն քանակի նոր խմբաքանակի մատակարարումը:

Այսօր էլ Ադրբեջանական APA լրատուական գործակալութիւնը հաղորդեց, որ Բաքուն կրականէտների նոր խմբաքանակ է պատուիրել ռուսական «Ուրալվազոնգավոյ» ընկերութեանը:

Քաղաքական եւ միջազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնի փորձագէտ Ռուբէն Մեհրաբեանը, վերլուծելով այս գարգացումները, եզրակացնում է՝ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական գործընկերն ու դաշնակիցը չէ, եւ Բաքուն գէնք-գինամթերքի վաճառքը չի տեղաւորում դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի շրջանակում:

«Ժամանակն է ուղղակի հարցադրելու Ռուսաստանի՝ որպէս միջնորդի դերի վերանայմանը: Եթէ մենք ուզում ենք կարգաւորենք այդ կոնֆլիկտը, նախ եւ առաջ

պէտք է գէնքի բեռնարգելք դրուի կոնֆլիկտով կողմերի վրայ, եւ Միւնսխի խմբի համախառնահանրը, որոնք ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի հինգ անդամներից երեքն են, հենց առաջինը վերահսկեն, որ այդ բեռնարգելքը պահպանուի, քանի դեռ չի կարգաւորուած կոնֆլիկտը», - ասաց Մեհրաբեանը:

Տարածաշրջանում ահռելի քանակութեամբ գէնք կուտակելով՝ կանգնում ենք պատերազմի վերսկսման վտանգի առջեւ, հաշուի առնելով թէ ինչ ուեժիմ է ղեկավարում Ադրբեջանում, կարծում է փորձագէտը:

Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն Սերգէյ Միւնսեանը, մինչդեռ, նշում է, որ Ռուսաստանի կողմից Ադրբեջանին գէնքի մատակարարումը նոր բան չէ, այն սկսուել ու շարունակուել է ետխորհրդային տարիներից: Փորձագէտը Բաքուի եւ Մոսկուայի միջեւ ռազմատեխնիկական գործարքը թէեւ մտահոգիչ է որակում, սակայն արտառոց չի համարում եւ ասում է, որ այդ փաստը գնահատելիս պէտք է մի կողմ թողնել զգացմունքայնութիւնը:

«Մեզ համար աւելի կարեւոր է այս գործարքի ռազմավարական նշանակութիւնը. Եթէ տեղի չունենայ այսպէս կոչուած կոմպենսացիոն գէնքերի եւ գինամթերքի տրամադրում Հայաստանին, բնականաբար, դա կարող է խախտել բալանսը», - ասաց փորձագէտը:

Սերգէյ Միւնսեանի խօսքով, սպառազինութեան բալանսը չխախտելու համար Ռուսաստանը գէնք է մատակարարում նաեւ Հայաստանին, իհարկէ, որոշակի արտօնեալ պայմաններով: Ըստ Միւնսեանի, ռազմական բաղադրիչի միջոցով Ռուսաստանը փորձում է Լեռնային Ղարաբաղի հակամար-

Հայերը Սարդարապատում «Վաստակեցին Ապրելու Եւ Քաղաքական Ասպարէզ Վերադառնալու Իրաւունքը»



Հանրապետութեան Օրուայ տօնակատարութիւն Սարդարապատի Յուշահամալիրէն ներս

Սարդարապատի Հերոսամարտի Յուշահամալիրում Հանրապետութեան տօնին նուիրուած միջոցառումները մեկնարկեցին Մայիս 28-ի առաւօտից. Սարդարապատ ժամանեց Հայաստանի ողջ իշխանական վերնախաւը՝ նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ:

Սերժ Սարգսեանին ուղեկցում էին նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդն ու Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ առաջինը:

Նախագահի շնորհաւորական ուղերձը, որը նա հրապարակեց յուշահամալիրում՝ Հանրապետութեան տօնին նուիրուած պարգեւատրման արարողութիւնից յետոյ, ամբողջութեամբ նուիրուած էր 1918 թուականի Մայիսի 28-ի յղթանակներին, հայ ռազմիկների, քաղաքական գործիչների, շինականների, հոգեւորականների, մտաւորականների, հայութեան ամբողջ մի սերնդի սիրանքներին:

«Եթէ մայիսեան հերոսամարտերում եւ մանաւանդ Սարդարապատում հայերը պարտուէին, ապա թուրքական զօրքերն անարգել մտնում էին էջմիածին եւ Երեւան: Եթէ այդքանից յետոյ աշխարհի

երեսին մնար հայ պատմաբան, ապա նա առանց մեծ դժուարութեան կարող էր հիմնաւորել, որ հայերի յղթանակը օբիեկտիւօրէն անհնար էր: Բոլոր փաստերը եւ ողջ իրականութիւնը կարծես մեր դէմ էին, բայց մենք փրկուեցինք այստեղ: Ինքներս վաստակեցինք ապրելու եւ միջազգային քաղաքական ասպարէզ վերադառնալու իրաւունքը», - նշեց նախագահը:

Սերժ Սարգսեանը չիսօսեց Հայաստանի այսօրուայ մարտահրաւէրներից ու խնդիրներից:

Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը Մայիսի 28-ի յղթանակները համարեց պարտաւորեցնող, յիշեցնելով՝ մեր սերնդակիցներն էլ կարողացան ապահովել Ղարաբաղի անկախութիւնը:

Քաղաքական ուժերից մեծ մասամբ իշխող Հանրապետականի ներկայացուցիչներն էին առաւօտեան Սարդարապատում: Գագիկ Ծառուկեանի գլխաւորած «Բարգաւաճ Հայաստանից», ընդդիմադիր ժառանգութիւնից ու Հայ ազգային կոնգրէսից ոչ ոք չկային Սերժ Սարգսեանի այցելութեան ժամերին:

Այս տարի Սարդարապատում չկային բացօթեայ տօնական սեղաններ ու հիւրասիրութիւն:

Հայաստանցիների Մեծ Մասը Վատահում Ե Եւրամիութեանը

Հայաստանցիների երկու երրորդը կարծում է, որ Եւրոպական Միութիւնը լաւ յարաբերութիւններ ունի Հայաստանի հետ, այս մասին են վկայում ԵՄ հարեւանութեան բարոմետրի տուեալները:

Սակայն 2013 թուականի աշնանն ու ձմռանը 12 տոկոսով պակաս հայաստանցիներ են այդպէս կարծել, քան նոյն տարուայ զարնանը: 2013-ի Սեպտեմբերի 3-ին, յայտարարուեց, որ Հայաստանը մտադիր է անդամակցել Մաքսային Միութեանը:

Հարցման համաձայն, հայաստանցիների մեծ մասը վատահում է Եւրամիութեանը: Հարցուածների կէսից աւելի նշել է, որ Եւրամիութեան հետ համագործակցութիւնը լաւ գործիք կարող է հանդիսանալ տարածաշրջանում անվտանգութիւն եւ խաղաղութիւն հաստատելու համար:

53 տոկոս հայաստանցիներ էլ Եւրամիութեան հետ համագոր-

ծակցութիւնը դիտարկում են որպէս աղքատութեան դէմ պայքարի միջոց: 44 տոկոսը կարծում է, որ Եւրամիութիւնը դրական ազդեցութիւն կարող է ունենալ, մինչդեռ 19 տոկոսը դիտարկում է այն որպէս բացասական երեւոյթ:

Վերազգային կառոյցներից հայերն ամենաշատը վատահում են ՄԱԿ-ին, 2 տոկոսով պակաս՝ Եւրամիութեանը եւ աւելի քիչ՝ ՆԱՏՕ-ին:

Ուշագրաւ է, որ հարցուածների 86 տոկոսը կարծում է, որ երկրում տնտեսական վիճակը վատ է, 72 տոկոսը դժգոհ է ժողովրդավարութեան դրութիւնից, միաժամանակ, սակայն, հարցուածների կէսից աւելին գոհ են իրենց կեանքից:

Համաձայն ԵՄ բարոմետրի՝ Արեւելեան հարեւանութեան միւս երկրների ընդհանուր հարցուածների համեմատ, տնտեսութիւնից եւ ժողովրդավարական դրութիւնից ամենադժգոհը հայերն են:

Յրաւէր Թուրքիոյ Նախագահին

Շարունակուած էջ 1-էն

խորհրդանիշը: Մրցոյթով յաղթած է «Շարմ» ընկերութեան նախագիծը՝ Անմոռուկ ծաղիկը, որով վրայ պատկերուած է Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրը, ծաղկի 5 թերթիկները կը խորհրդանշեն այն ցամաքամասերը, ուր բնակութիւն հաստատած են ջարդերէն մազապուրծ հայերը: Միջոցառումները կ'ունենան նաեւ կարգախօս՝ «Յիշում եմ եւ պահանջում»:

Այս տարի պիտի բացուի Կո-

միտասի թանգարան, պիտի ընդունուի համահայկական հռչակագիր, վերանորոգուած եւ նոր ցուցադրութեամբ ընդարձակուած պիտի վերաբացուի Յեղասպանութեան թանգարանը:

Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեան տեղեկացուց, որ ի թիւս շարք մը միջոցառումներու, հաստատուած է նաեւ Հայոց ցեղասպանութեան բոլոր նահատակներուն սուրբերու շարքը դասելու նախաձեռնութիւնը:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԻՆ Ա.Դ.Յ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Մի րեյի ներկաներ, Ընդամենը 11 ամիսներ կը բաժնեն մեզ Հայոց Ցեղասպանության 100-ամեակին եւ այսօր, հայրենիքին մինչեւ Սփիւռքի ամենահեռավոր անկիւնը նախապատրաստական աշխատանքները բուն թափով կ'ընթանան եւ որքան մօտենայ Ապրիլ 24-ը, կամայ թէ ակամայ, համայն հայութիւնը եւ ինչու չէ նաեւ ամբողջ աշխարհը մեծ իրադարձութեան մը ակնկալիքով պիտի համակուի: Այդ առումով, մեծ են սպասելիքները նաեւ այս պատկառելի յանձնաժողովին, որ կոչուած է համակարգելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները: Սակայն, որպէս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ, կը կարծեմ, որ նախադէպը չունեցող այս իսկապէ՛ս համագալսի մարմինը կոչուած է ընելու շատ աւելին քան լոկ միջոցառումներ կազմակերպելը: Տարիներ շարունակ, մեր ժողովուրդի առաջ ծառայած մարտահրաշխներու հաղթահարման միակ գրաւականը միասնականութիւնն ու համախմբումը համարած ենք, սակայն եւ այնպէս բարի ցանկութիւններէն անդին ոչ մէկ գործնական քայլ առած ենք այդ ուղղութեամբ: Թերեւս պատշաճ է, որ մեր ժողովուրդի մեծագոյն ցան է, որ մեզ համախմբած է այստեղ, սակայն ոչինչ կը խանգարէ մեզ ընդլայնելու այս յանձնաժողովի աշխատանքային դաշտը եւ սկիզբը դնելու ազգային ոչալ ուսումնարարական ծրագրի մը մշակման: Նկատի ունենալով, որ Ցեղասպանութեան թղթածրարն է այս յանձնաժողովի ուշադրութեան առարկա, յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հարկ կը համարեմ ներկայացնել երեք



կարեւոր կէտեր, որոնք որպէս հիմք կրնան ծառայել ապագայի մեր գործունէութեան համար: 1. Ցեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովին պէտք է բխի մշտական մարմին մը, որուն պարտականութիւնը պէտք է ըլլայ մշակել հայ դատի հետապնդման ընդհանուր ռազմավարութիւն ու պէտք է, Հայաստանի եւ Սփիւռքի դերերու յստակ բաժանում կատարուի եւ անպայման հաշուի առնուին Հայաստանի պետական շահերը եւ Սփիւռքի ակնկալութիւնները: Միասնական ու համակարգուած մօտեցումը միակ գրաւականն է կանխելու նման անախորժութիւններ, որոնք ծագեցան Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ՝ Հայաստան-Թուրքիա Protocol-ներու ստորագրման օրերուն: 2. Պէտք է արձանագրել, որ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը անկասելի դարձած է եւ ուշ կամ կանուխ կարգը պիտի գայ Թուրքիոյ պետութեան: Այդ իմաստով, բոլորիս համար

յստակ է, որ ճանաչումը միայն առաջին քայլն է եւ անորմով չաւարտիր մեր արդար իրաւունքներու պահանջը: Հետեւաբար, ժամանակը հասունցած է, ցեղասպանութեան ճանաչումին անդին նայելու եւ հատուցման իրաւական հիմքեր մշակելու: Առ այսօր, բացի վերնագրերէն գրեթէ ոչ մէկ աշխատանք տարուած է այդ ուղղութեամբ տրուած ըլլալով, որ իւրաքանչիւր հայ, ներառեալ այսօր հոս գտնուողներս, հատուցման վերաբերեալ իր առանձնապատկապակերպացումը ունի: 3. Թուրքիոյ առողջ մտաւորականութեան ու քաղաքական գործիչներու հետ կապերը պէտք է սերտացնել: Ցեղասպանութեան թեմային արծարծումը, ճանաչման եւ հատուցման գործընթացներուն մասին ամէնօրեայ գրոցներուն մեր մասնակցութիւնը շատ աւելի դրական արդիւնք կրնայ տալ Թուրքիոյ մէջ դրական հանրային կարծիք ստեղծելու մէջ քան միայն հեռավոր արհեստագործական շատ մը աշխատանքներ:

Յարգելի ներկաներ, Պէտք է հաւատալ եւ ընդունիլ, որ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նշումը, տեղի ունենալիք միջոցառումները կամ ինչպէս շատերու կողմէ ընդունուած է ըսել «Հայկական ցունամին» պիտի դառնայ նոր սկզբնակէտի մը խորհրդանիշը: Թուրքիոյ վարչապետին, անցնող 24 Ապրիլին ներկայացուցած, իբրեւ թէ քաղաքական ներողամտագիրը խորքին մէջ Թուրքիոյ նախաձեռնողի դերին մէջ ըլլալու փաստի արձանագրումն էր: Անոր դիմաց, մենք որպէս հաւաքականութիւն դէպքը արձանագրող կամ առաւելագոյն պարագային էրտողանի խօսքին դիմադարձողը միայն հանդիսացանք: Ինչպիսի՞ն պիտի ըլլայ մեր դիրքորոշումը եւ մարտավարութիւնը եթէ երբեք յառաջիկայ Ապրիլ 24-ին Թուրքիոյ պետութիւնը պաշտօնապէս ճանչնայ Ցեղասպանութիւնը, թեկուզ եւ ոչ այն բառերով կամ բովանդակութեամբ որ մենք կ'ակնկալենք: Խօսքս աւարտելով արձանագրեմ, որ մեր բոլոր ինդիւրներուն՝ Ցեղասպանութեան ճանաչման, Հայաստանի հզօրացման, Արցախի անվտանգութեան եւ միջազգային ճանաչման, Սուրիա-հայութեան եւ Միջին Արեւելքի հայութեան անվտանգութեան ինդիւրներուն հիմնարար լուծումներ տալու համար մենք կարիքն ունինք ազգային լիարժէք, մասնագիտական եւ առողջ ծրագրի: Իսկ այդպիսի ծրագիր մը մշակելու ե՛ւ կարողութիւնը ե՛ւ հնարաւորութիւնը անտարակոյս ունինք, կը մնայ միայն նախաձեռնութիւնը, զոր մենք, որպէս հայ ժողովուրդի գերագոյն ներկայացուցչական մարմին կարող ենք տրամադրել:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՀԱՐՍՏԱՑԱԾ Է 450 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ



Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկին յատկացուած է Հայոց Ցեղասպանութեան ու անոր հետեւանքներուն առնչուող լուսանկարներու բացառիկ եւ հարուստ հաւաքածոյ: Շուրջ 450 բնօրինակ լուսանկարներու հաւաքածոն նուիրած են յունահայ իտանիկեան ընտանիքի ժառանգորդները՝ կարեւոր նկատելով Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան պահպանումը եւ փոխանցումը սերունդներուն: Լուսանկարներու հաւաքածոն կը ներառէ Օսմանեան կայսրու-

թեան, Յունաստանի, Եգիպտոսի, Սուրիոյ որբանոցներուն, որբերու կեանքին, Մերձաւոր Արեւելքի ամերիկեան նպաստամատոցի որբախնամ գործունէութեան, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան առանձին դրուագներու առնչուող լուսանկարներ: Լուսանկարներու մեծ մասին ետեւի կողմը առկայ են չափազանց կարեւոր տեղեկութիւններ հաղորդող գրութիւններ: «Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի նախօրէին այս հաւաքածուի ձեռքբերումը ոչ միայն



խորհրդանշական, այլ նաեւ բացառիկ իրադարձութիւն է մեր թանգարանի համար, եւ այս լուսանկարներն իրենց ուրոյն տեղը կը գտնեն 2015 թուականի Ապրիլին բացուող թանգարանային նոր ցուցադրութիւնում: Լուսանկարների մէջ իր կարեւորութեամբ առանձնանում է, ի հարկէ, երիտթուրք պարագլուխ Իսմայիլ Հաքքի բէլի՝ անգլիացի զինուորականների կող-

մից ձերբակալութեան լուսանկարի բնօրինակը», յայտնած է Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն՝ Հայկ Դեմոյեանը: Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկը այս եզակի հաւաքածոն ձեռք բերելու համար իր երախտագիտութիւնը յայտնած է Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Գագիկ Ղալաչեանին:

ԹՈՒՐՔԻԱՆ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՆՈՒԼ Է ՏՈՒԵԼ

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ
Գրական թերթ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի՝ Ապրիլի 24-ի նախօրէին, Հայոց ցեղասպանութեան առնչութեամբ յայտարարութիւնը, որով նա ցաւակցել է անցեալ դարակգբին Օսմանեան կայսրութեան տարածքում սպանուած հայերի ժառանգներին եւ հանգստութիւն մաղթել զոհերի հոգիներին, այլ բան էջր, քան արդէն ժանգոտող իրենց ժխտողականութիւնը վերջնական քայքայումից փրկելու դիւանագիտական ածպարարութիւն, որին նոյնիսկ Թուրքիայի ներսում սկսել են չհատարել:

Թուրքիայում գնալով աճում է նրանց թիւը, ովքեր փորձում են ուզում են Հայոց ցեղասպանութեանն առնչուող ճշմարտութիւնն իմանալ, առերեսուել իրենց անցեալին: Եւ որքան էլ Էրդողանի յայտարարութիւնը անսպասելի թուալ, ակնյայտն այն է, որ նման յանցագործութիւնները վաղեմութեան ժամկէտ չունեն, եւ յանցագործութիւնը ինչով ու ինչպէս էլ փորձես թաքցնել, անմեղ զոհերի արիւնը թափանցում է պատմութեան մաշկի տակից՝ չիշեցնելով յանցանքի ու հատուցման մասին: Թուրքական քաղաքականութեան մէջ Հայոց ցեղասպանութեանը վերաբերող՝ վարչապետի անյայտ, անհասցէ ու լղրուած այս մօտեցումը դժուար է մեղքի գիտակցման ու ապաշխարանքի քայլ դիտել, երբ Թուրքիայի՝ հայերի նկատմամբ ամբողջ քաղաքականութիւնը նոյն հակահայ դիրքերում է, յուշելով, որ իրականում գործ գայլը նոյն գիշատիչն է մնացել:

Էրդողանն իր յայտարարութեանը գուզահեռ չի մոռացել չիշեցնել, որ արցախեան հակամարտութեան հարցում իրենց դիրքորոշումը չի փոխուել, այսինքն՝ հայ-թուրքական սահմանը փակ է մնալու, հայերի հետ դիւանագիտական յարաբերութիւնները՝ փականքի տակ, քանի դեռ հայերը «գրաւեալ» տարածքները չեն ազատել: Քեասպի դէպքերը կրկին չիշեցրին թուրքական ձեռագրի մասին: Եւ որքան էլ Թուրքիան փորձի պիտակները փոխելով կեղծիքը ճշմարտութեան տեղ մատուցել, միեւնոյն է, ժխտողականութեան քաղաքականութիւնն սկսել է ճաքեր տալ, եւ այդ ճաքերը գնալով խորանալու են:

Ինչպէս նշում է թուրք պատմաբան Թաներ Աքչամը. «Մենք առաջուանը չենք: Մենք, այսինքն՝ 1915թ. Հայոց ցեղասպանութեան հարցով դարաւոր ստի դէմ պայքարող մարդիկ, շատ ենք փոխուել: Եթէ վարչապետն այս խօսքերն ասէր սրանից 10 տարի առաջ, այն «յեղափոխութիւն» կը համարէինք: Սակայն այժմ շատ ջրեր են հոսել...»: Ստամբուլի քաղաքական հետազօտութիւնների կենտրոնի աւագ գիտաշխատող Չենգիզ Աք-

թարն էլ նշում է, որ «Թուրքիայում 1915 թ. դէպքերի վերաբերեալ հանրային լայն շրջանակներում չկայ իրական պատկերացում: Յիշողութիւններն աղաւաղուել են եւ նուազագոյնի հասցուել պետութեան կողմից»: Թուրք հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ Թուրքիան ճշմարտութեան պատերազմում տանուլ է տուել: «Հայերի բնաջնջումը իրենց պատմական տարածքներում ինչպէս էլ անուանենք, ակնյայտ փաստ է»: «1915-ին տեղի ունեցածը, բառի բուն իմաստով, ցեղասպանութիւն է», - իր հերթին հաստատել է թուրք գրող Հիւզա Քանան, ով երբ իմացել է, որ դեռեւս 100 տարի առաջ Թուրքիայի հողերի կէսը ոչ մահմեդականներով է բնակեցուած եղել, շանթահարուել է...: «Ո՛ւր են հիմա միլիոնաւոր մարդիկ: Թուրքիայի Հանրապետութեան ամէն էջը կեղտոտ եւ արիւնոտ է: 100 տարուայ ամօթը կայ...»:

Նման տրամադրութիւնների պարագայում ո՛ւմ է փորձում մոլորեցնել Էրդողանը, ո՛վ էլ ի՞նչն է ստիպել նրան նահանջել, եթէ մտքինը յարձակուելն է: Եւ արդեօ՞ք համարձակութիւն կ'ունենայ նաեւ ճշմարտութեանը ցաւակցել, որ 100 տարուայ բանտարկեալ է իր երկրում: Այն տպաւորութիւնն է, որ թուրքերն ամէն ինչ յարաբերում են կիսալուսնի պատկերին, մոռանալով ամենակարեւորը, որ կիսաարդարութիւնը նոյն անարդարութիւնն է, ինչպէս եւ կիսամեղանչումը՝ աւելի մեծ մեղք: Էրդողանի յայտարարութիւնն էլ հեռու է Հայոց ցեղասպանութեան ճանաչումից, որովհետեւ կիսաճանաչումը աւելի խորացած ժխտողականութիւնն է: Թուրքիայի ընդդիմադիր գործիչները կարծում են, թէ իր յայտարարութեամբ «Էրդողանը փորձել է հաճոյանալ հայկական պիւլուքին, հայկական լոբբիստական ուժերին դուր գալու մրցավազքի մէջ է մտել»:

Ակնյայտ է, որ նրա ուղերձը լի է թուրք ազգի եւ Թուրքիայի պատմութեան իրողութիւններից շատ հեռու, կոսմոպոլիտ եւ անհիմն արտայայտութիւններով...:

Անտարակոյս, այս յայտարարութիւնը դեռ շատ քննարկումների տեղիք կը տայ Թուրքիայի ներսում եւ նրա սահմաններից դուրս, զարմանալին ազերիների հանգստութիւնն է, որոնք, մանաւանդ Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ գրօ գիշման դէպքում անգամ, անկարող են իրենց հիասթափութիւնը զսպել եւ չանդամալուծուել հիստերիայից: Կասկածից վեր է, որ պատճառը աւագ եւ կրտսեր եղբայրների միջեւ պայքանաւորութիւնն է, ինչն էլ հերթական ապացոյցն է, որ Էրդողանի այս յայտարարութիւնը թուրքական դիւանագիտութեան հերթական ածպարարութիւններէն է, միայն թէ զարմացողների ու հաւատացողների թիւն է կրճատուել:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐԿ ՊԱՂԵՍՏԻՆ ՊԱՊԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Անցնող շաբաթուան ընթացքին կաթողիկէներու Ֆրանսիսկոս սրբազան քահանայապետը իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Երուսաղէմ: Ս. Պապին ընկերակցող պաշտօնական պատուիրակութեան մաս կը կազմէր Լիբանանի մարօնիթ համալսարանի կրօնապետ էլ Ռայի կարդինալը: Այս առթիւ սրբազան քահանայապետը այցելեց նաեւ Պաղեստին եւ պատարագեց Բեթղեհէմի մէջ: Շրջանէն ներս մնալուն խաղաղութեան եւ պաղեստինեան դատի արդար լուծման համար Ֆրանսիսկոս Պապը թէ իսրայէլի եւ թէ Պաղեստինի ղեկավարները վատիկան հրաւիրեց, որպէս համախո-

հական նոր եւ բարի նախաձեռնութիւն մը: Սակայն այս առնչութեամբ իսրայէլի վարչապետ Նաթանիաուան յայտնեց թէ՛ Պաղեստինի միաւորուած նոր կառավարութեան հետ կարելի չէ խաղաղութեան բանակցութիւններու սկսիլ, այնքան ատեն որ Համաա շարժումը իսրայէլը բնաջնջելու որոշումը ի գորու կը պահէ: Սրբազան քահանայապետին Սուրբ Երկիր այցելութեան գլխաւոր նպատակներէն մին էր խաղաղութիւն վերահաստատել տարածաշրջանէն ներս, վերջ տալ Սուրիոյ քաղաքացիական կռիւներուն եւ առաջն առնել քրիստոնեաներուն արտագաղթին:

ԼԻԲԱՆԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՅ ՄԻՇԷԼ ՍՈՒԼԷՅՄԱՆ ՋԵՐՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՄԲ ԴԻՍԱՒՈՐՈՒԵՑԱՒ ԻՐ ԾՆՆԴԱՎԱՅՐ ԱՄՇԻԹԻ ՄԷՋ



Լիբանանի Ազգային Տեղեկատու Գործակալութեան համաձայն՝ իր պաշտօնավարութեան վեց տարուան ժամանակաշրջանի լրումէն ետք Հանրապետութեան նախկին նախագահ Միշել Սուլէյման Չերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ իր ծննդավայր Ամշիթ աւանին մէջ: Արդարեւ հազարաւոր համակիրներ բարի գալուստի ցուցանակներով հաւաքուած էին իր տան առջեւ: Իսկ եկեղեցիներու զանգակներ ուրախութեան զօղանջներ կը հնչեցնէին իր ժամանումին առթիւ:

Մենք զօրավիզ պիտի կանգնինք որեւէ մէկ նախաձեռնութեան, որ կը նպատակադրէ Լիբանանի բարեկեցութիւնը»:

Բարի գալուստի տօնախմբութեան ներկայ էին նախկին վարչապետ Նէժիպ Միքաթի, Յառաջդիմական Սոցիալիստ կուսակցութեան նախագահ Ուալիտ Ճամպլաթ եւ այլ ականաւոր անձնաւորութիւններ:

Նշենք նաեւ որ ՄԱԿի Ընդհանուր քարտուղար Պան Քիմուն նախագահի մամլոյ գրասենեակին հետ հեռախօսազրոյց մը ունենալով գնահատած է իր պաշտօնավարութեան շրջանին Սուլէյմանի վարած բարենպաստ քաղաքականութիւնը Լիբանանի մէջ կայունութիւնն ու ապահովութիւնը պահպանելու ինդրին մէջ:

Voice of Lebanon Radio-ի հաղորդումին համաձայն նախկին նախագահը զինք դիմաւորողներուն առջեւ խօսք առնելով ըսած է. «Կը յուսամ որ նախագահական աթոռը երկար ժամանակ թափուր չի մնար:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ «ՅՐԱՆԴ ՏԻՆՔ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՍՐԱՅԻՆ»



Պոլսահայ Միութեան «ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՍՐԱ-ՂԸ» անուանուած է ի յիշատակ Պոլսոյ Ակօս Շաբաթաթերթի հիմնադիր՝ հանգուցեալ Հրանդ Տինքի:

Հրանդ Տինք լու՛ռ քաջութեան անձ մըն էր: Ան մէկն էր որ հասկցած էր թէ հաղորդակցութիւնը միակ միջոցն է փոխըմբռնումի եւ խաղաղութեան:

Ուրախութեամբ կը յայտարարենք, թէ Չորեքշաբթի Յունիս 4, 2014ին գիշերը ժամը ճիշդ 8ին պիտի կատարուի բացումը Միութեան «Հրանդ Տինք Դասախօսութեան Սրահին»: Բացման արարողութեան ներկայ պիտի ըլլայ Հրանդ Տինքի այրին՝ Ռաբել Տինքը:

Տեղի պիտի ունենայ բանախօսութիւն՝ Տինքի յիշատակին հաստատուած Հիմնադրամի Հիմնարկին, որ կը ջանայ ծրագրեր մշակել մարդկային իրաւունքներու դաստիարակչութեան գծով:

Սոյն բանախօսութիւնը պիտի կատարէ Հիմնադրամի Հիմնարկին Ծրագրի Համակարգող (Project Coordinator) Զէյնէթ Թաշքըն:

Տեղի պիտի ունենայ պատշաճ հիւրասիրութիւն: Մուտքը ազատ:

Կը հրաւիրուին Պոլսահայ Միութեան անդամները, համակիրները եւ համայն Հայ ժողովուրդը:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՌԱՔԵԼ ՏԻՆՔԻ
Ծնած է 1959-ին, Սիրիոյ: Ընտանիքը մաս կը կազմէ Հայ Վարդօ տոհմին: Հօրը՝ Սիամիստի եւ մօրը՝ Տէլայի երկրորդ զաւակն է: Ութ տարեկանին կը կորսնցնէ մայրը:

1968-ին, Անատոլի տարածքին ցրուած հայերը գտնելու եւ անոնց ուսում ջամբելու փափաքող պոլսեցի խումբ մը հայերու ջանքերով, իսթանպուլ կը բերուի իր

գիւղէն ժամանած 12 մանուկներուն հետ եւ կը տեղադրուի Թուզլայի մանկանց ճամբարը:

Նախնական ուսումը ստացած է Խնձիրտիպի նախակրթարանին մէջ, ապա յաճախած է Պալատի Խորէնեան վարժարանը:

2592 Called Villada Circle
Zaven Hanessian
Duarte, CA.91010

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայրափարքի քառամս: Գլխացաւ, վզի, մէջքի, յօդոցի և մկանային ցաւեր: Իրենաշարժի վտարի ենտեանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՌՈՒՄԱՆԱՐԱՅ ԹԵՍԸ
Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա.
Ամենայն Հայոց Հայրապետի
Վախճանման 20-րդ Տարելիցը
(1994 - 2014)

ԴՈՒՏ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆԹ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ռումանիոյ Թեմին Առաջնորդը
 (1943-1955)

Ազգովին Հայ Եկեղեցին ու Հայաստանի Հանրապետութիւնը այս տարի կը նշեն մեծանուն Հայրապետ՝ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումին 20-րդ տարելիցը: 1994 թուի Օգոստոսին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ 86 տարիքին, ծնած 1908 թուին, կը վախճանէր մեր օրերու ամենէն ընտիր հոգեւորականներէն, բազմաշնորհ եւ բազմաբարեգին՝ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ 39 տարիներ գահակալելէ ետք: Վախճանման 20-ամեակին Ռումանայ պատմական Թեմին մասին սոյն յօդուածը կը ձօնեմ իր յիշատակին, ուր Երջանկայիշատակ Հայրապետը որպէս Թեմակալ Առաջնորդ Ռումանայ Թեմին ծառայած է 12 տարիներ (1943-1955): Նոյն տարուոյն սեպտեմբերին Հայոց Եկեղեցւոյ Ազգային-Եկեղեցական Ժողովը զինք ընտրած է Կաթողիկոս Ամենայն Հայոց:

1941 թուին Ռումանիոյ Թեմին Առաջնորդ Յուսիկ Արքեպս. Զոհրապեան վախճանած էր եւ բոլորին աչքը կեդրոնացած երիտասարդ մտաւորական ուսուցիչ, Պուքարեստ ծնած եւ բարձրագոյն ուսում ստացած ուսուցիչ Լեւոն Կարապետ Պալճեանին վրայ: Թեմի խնդրանքին ընդառաջելով, եւ մանաւանդ անսալով իր ներքին կանչին դէպի Քրիստոս եւ Հայ Եկեղեցին, Լեւոն Պալճեան, Համաշխարհային Բ. Պատերազմի արհաւիրքներուն ընդմէջէն, ուժակոծուած եւ վիրաւոր Եւրոպայի ամենէն վտանգաւոր եւ քանդուած ուղիներով, տաժանելի ճամբորդութեամբ Պուքարեստէն Աթէնք պիտի հասնէր ստանալու համար Հայ Եկեղեցւոյ հոգեւորականի կարգը՝ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Կարապետ Արքեպս. Մազլմեանի ձեռամբ՝ Աթէնքի Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ 1943 Սեպտեմբեր 29-30 օրերուն վերակոչուելով Վազգէն վարդապետ Պալճեան:

Վազգէն Հայրապետ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանար 1951-ին իր նախորդին՝ Տ. Տ. Գէորգ Զ Չորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն՝ ընտրուած եւ օծուած 1945 թուին:

Ռումանիայ Թեմը

Թեմին պատմութիւնը սկիզբ կ'առնէ 1781 թուականէն, երբ Պուքարեստի մէջ կառուցած էին Ս. Հրեշտակապետ Հայ Եկեղեցին՝ «Գեղեցիկ, քարաշէն, եւ փառաւոր» կառուցող: Սակայն տարիներու ընթացքին եկեղեցւոյ շէնքը հինգսոր ըլլալով արդէն նեղ կուզար հետզհետէ աճող Հայ Համայնքին համար, յատկապէս 19-րդ դարու վերջերը համիտեան կոտորածներու հետեւանքով «հայերու թարմ հոսանք մը խուժեր էր Պուքարեստ», եւ համայնքին դիմագիծը կերպարանափոխուեր էր: Նորեկներուն մէջ մեծ թիւ կը կազմէին Ռոտոսթոցիներն ու Կեմախցիները, որոնք տեղացի ուսմանահայերու կողքին երկ-

րորդական դիրքերու վրայ կը մնային, որքան ատեն որ ազգային գործերու մենաշնորհը անոնց վրայ կը կեդրոնանար:

Եկեղեցւոյ սակայն ձեռք առին կրթական գործը որ լքուած էր: Աշակերտներ հաւաքեցին եւ Հայ դպրոցը ծաղկեցուցին, մանաւանդ երբ 1908-ի Օսմանեան սահմանադրութեամբ առիթ տրուեցաւ հայերուն հաստատուելու Ռումանիա՝ յատկապէս մայրաքաղաք Պուքարեստի մէջ: Նոր եկեղեցւոյ շինութեան հիմը դրին բոլորը միանաբար 1911 թուին, հիմնարկէքը կատարեցին Յուլիսին, ճիշդ այն տեղը ուր էր հին 1781 թուին կառուցուած եկեղեցին: Գլխաւոր նուիրատուն կը լիշուի տիկին Տու-



տուքա Պըլլըզեան, իսկ ճարտարապետը՝ մի ոմն «յազգէն Բումենաց», Սարգիս կամ Զէրքէզ անուն, որպէս պատասխանատու յատկազիծի պատրաստութեան: Ճարտարապետը նկատի ունեցած է թէ՛ էջմիածնի Մայր Տաճարը եւ թէ՛ Անիի Մայր Եկեղեցին եւ կառուցած հոյակապ Մայր Եկեղեցին:

Նոր եկեղեցւոյ հիմնարկէքը կատարած են երկու քահանայ հայերը՝ Յարութիւն Անդրէասեան եւ Ղեւոնդ Միքայէլեան: Ներկայիս կանգնած հայկական հարազատ ոճով եւ քանդակներով հարուստ տաճարն է այդ «պատկառելի շէնքը», որ չորս տարիէն կառուցուած է, եւ 1915-ի Սեպտեմբերին, «հայ ժողովուրդի մարտիրոսագրութեան տարին», ինչպէս գրուած է, օծուած ձեռամբ Ադրիանուպոլսոյ Առաջնորդ Արմաշական միջին սերունդէն Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեանին, յետագային նահատակ Առաջնորդին Ամերիկահայ Թեմին:

Միացեալ Չոյզ Թեմերը

1922 թուականին շուրջ 20,000 հայեր կ'ապրէին Ռումանիոյ մայրաքաղաքին եւ շրջակայ կոնստանցա, Գայրաջ, Եաշա եւ Ռոման քաղաքներուն մէջ: Հինէն երկու թեմեր կից եղած են՝ Ռումանիոյ եւ Բեսարաբիոյ, եւ այդ պատճառով ալ որոշ բարդութիւններ գոյացած

Շարք էջ 18

THE ARARAT-ESKIJIAN MUSEUM
 AGBU-ASBED
 HAMAZKAYIN SAN FERNANDO VALLEY BARUYR SEVAG CHAPTER
 NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
 presents a screening of
Digging Into the Future – Armenia
 Directed and Hosted by
 Joseph Rosendo of *Joseph Rosendo's Travelscope* on PBS

Host Joseph Rosendo explores Armenia's history in the new series from Travelscope

Friday June 06th 2014 at 7:30 pm
 Ararat-Eskijian Museum – Sheen Chapel
 15105 Mission Hills Road
 Mission Hills, CA 91345

Digging into the Future (working title), a new archeology series from the Emmy-award winning producers of *Joseph Rosendo's Travelscope*, turns viewers on to the thrill of discovery while making genuine human connections and bridging a people's past and present. Host *Joseph Rosendo* merges archeology's science and humanity into an hour-long entertaining, informative, educational and cultural adventure that spans the globe from the Americas to Europe, the Middle East, Africa and Asia. An archeological expedition is a journey of discovery and every discovery begins with questions. The answers lie in the past and the present -- and a people's cultural artifacts are the clues. In his first archeological exploration of the series, Joseph joins archeologists from UCLA's Cotsen Institute on a journey through Armenia. Learn more about the new series at this special screening! Meet and speak with show host and Emmy-winning director, Joseph Rosendo, as well as the production team and UCLA archaeologists. Question and Answer session to follow screening.

- Admission free (Donations appreciated)
- Reception following program

for more information call the Ararat-Eskijian Museum at 818- 838-4862 or e-mail ararat-eskijian-museum@netzero.net

Յարցազրոյց ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՔԻ Է ՅԱՆՈՒԵԼ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆԻ ԳԻՐՔԸ

ՄԱՐԻՆԷ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Առաջին հայ վաւերագրող Զապէլ Եսայեանի «Աւերակներու մէջ» գիրքը մէկ ամիս առաջ հրատարակուել է թուրքերէն:

Պատմութիւնը 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած հայերի ջարդի վկայութիւնն է՝ սպանութիւն, բռնաբարութիւն, թալան: Դէպքերը կատարուել են թուրք-իսլի երկրորդ սահմանադրութեան ընդունումից ամիսներ անց:

Պոլսի պատրիարքարանի կազմում Զ. Եսայեանը որբանոց հիմնելու նպատակով այցելել էր Ատանա: Իր այնտեղ մնացած երեք ամիսներին նա նկարագրում է տեսածը, ջարդերին զոհեր տուած ընտանիքներին... Իր զգացողութիւնները մասին նա նամակներ էր գրում ամուսնուն՝ ինդրելով, որ դրանք պահպանի, որովհետեւ «կարող է պէտք գան»: Եւ 1910 թ. այդ զգացողութիւնների ու վկայութիւնների պատառիկ-նամակների վրայ էլ նա գրեց գիրքը: Դրանից 1 տարի անց այն տպագրուեց:

Հայաստանում Զապէլ Եսայեանի մասին շատերը չգիտեն: Գիրքը թուրքերէն թարգմանած Գայուշ Զալըքման-Գավրիլոֆն ասում է, որ այդ մասին պէտք է հարցնել Հայաստանում, եւ մենք էլ պէտք է աւերեսուենք մեր պատմութեան հետ: Զրուցակիցս այս տարուայ մարտին համայնքի դեկավարի պաշտօնի համար իր թեկնածութիւնն էր առաջադրել թուրք-իսլի ՏԻՄ ընտրութիւններին: Նրա ասելով՝ թէեւ գիրքն իր մօտ եղել է երկու տարի, բայց թարգմանել է 8 ամսուայ ընթացքում:

«Աւերակներու մէջ»-ը տպագրուել է Ստամբուլում գտնուող «Արագ» հրատարակչութիւնում: Շուտով հրատարակուելու է գրքի երկրորդ տպաքանակը: Գայուշ Զալըքման-Գավրիլոֆի ասելով՝ գրքի առաջին տպաքանակն արդէն սպառուում է:

Յարցում-Ինչո՞ւ այդքան ուշացումով՝ 103 տարի յետոյ թարգմանուեց գիրքը: Փաստօրէն, մինչ այդ չկար թուրքերէն տարբերակը:

Պատասխան- Վերջին 10-15 տարիներին է, որ սկսել ենք որոշ ձայն բարձրացնել երկրում: Հայկական թերթի՝ «Ակօս»ի հիմնուելն անգամ երկրի կացութեան ինչ-որ չափով փոխուելու նշանն էր, այնուհետ կանանց իրաւունքների պլատֆորմը կազմակերպեցին, դրանից յետոյ երիտասարդները հիմնեցին «Նոր զարթօնք» պլատֆորմը: Դժբախտաբար եւ շատ-շատ դժբախտաբար Հրանդ Տինքի մահը մեր ժողովրդին ոտքի ելնելու դրդապատճառը եղաւ: Յատկապէս Հրանդ Տինքից յետոյ թուրքերն էլ սկսեցին աջակցութիւն ցուցաբերել մեզ՝ հիմնարկներ կազմելով: Պահ եկաւ, որ ես նոյնիսկ վախեցայ՝ մտածելով, որ վերադառնում ենք 1908 թ. ընդունած սահմանադրութեան օրերին: Գիտէք, առաջին անգամ այդ սահմանադրութեամբ իսլամ եւ ոչ իսլամ հատուածները պետականօրէն պէտք է ունենային հաւասարութիւն, բայց դրան յաջորդեց Ատանայի կոտորածը:

Յարցում - Գիրքը վաճառու՞մ է Թուրքիայի գրախանութներում:

Պատասխան - Այո, վաճառուում է: Ամբողջ այս ասածներին



պատճառով է հայերին ձայն տալը, Հրանդ Տինքի մահը, թուրքերի եւ քրդերի որոշ հատուածների մեզ հետ լինելը («Մենք էլ հայ ենք»,- ասում էին այդ օրերին): Դրանից յետոյ մենք սկսեցինք համագործակցել քրդերի եւ թուրքերի հետ: Դա որոշ բան փոխեց երկրի կառավարական հատուածներում: Նախ-

կինում մեր գրքերը կարող էինք տեսնել մեզ մօտ, մեր ընկերների գրախանութներում, իսկ հիմա այդպէս է՝ հեռու թաղամասերում էլ կարող ես գտնել հայերէն գրքեր կամ բնաւ չես սպասում, որ մոլեւրում (հանրախանութ) էլ կարելի է գտնել դրանք: Օրինակ, գրքի մոլերից մէկում Զապէլ Եսայեանի գիրքը տեսայ:

Յարցում - 5 տարի առաջ պատկերն այլ էր: Յայոց ցեղասպանութեան մասին պատմող գրքեր չէիր գտնի թուրքական գրախանութներում: Մի՞թէ պատը ջարդուեց:

Պատասխան - Մի քիչ: Յարցում - Այսինքն՝ ոչ ամբողջովին:

Պատասխան - Ո՛չ, բացարձակապէս: Նոյնիսկ ամէն վայրկեան կարող է ամէն ինչ յետ դառնալ: Դրա համար ասացի, որ սահմանադրութեան օրերին եմ նմանեցնում այս օրերը: Այն ժամանակ էլ հայերը ոգեւորուած էին, հաւասարութիւն կար, մենք կարող էինք խօսել եւ այլն, հիմա նոյնն է. ասում ենք՝ ամէն ինչ փոխուած է, բայց իմ մտքի մէջ կայ այն, որ կարող է լինել այն, ինչ կատարուել էր 1909 թ. Յարցում - Դուք ասացիք, որ

որոշակի բաներ են փոխուել Թուրքիայում, հայերը ոտքի են կանգնել, ձայն են բարձրացնում... Դա Թուրքիայի դեմոկրատ երեւալու դիմա՞կն է, որ ձգտում է Եւրամիութիւն մտնել:

Պատասխան - Այդպէս սկսեց, բայց հիմա կառավարութեան հոգը չէ: Ի՞նչ եղաւ: Ժողովրդավար թուրքերը, ժողովրդավար քրդերը մտան մի գործընթացի մէջ, որն այլեւս չի կարելի կանգնեցնել: Այսօր թուրքիացում կան այնպիսի խորհողներ, որ ասում են՝ այո, հային այս էք արել, հիմա պէտք է հատուցուի: Հիմա նրանց շարժումն է սկսել, որը պետական կամ կառավարական չէ: Հիմա այդ պայքարը մղում է ժողովրդի մի մասը, որին դուք էլ դրսից դիտում էք:

Յարցում - Ո՞վ է հայն այսօրուայ Թուրքիայում:

Պատասխան - 40-50.000 քրիստոնեայ հայեր, մի քանի դպրոցներ, եկեղեցիներ, ներկայացուցիչ ունենալով անիմաստ պատրիարքարան, սա է հաւաքականութիւնը: Այս հայութեան շատ-շատ քիչն է, որ հոգ է տանում, ձայն է բարձրացնում, մնացածը մտածում է «ձայն

Մար.ը էջ 18

Կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՄՐԱՀԻՆ

Պատուոյ Հիւր

ՌԱՔԵԼ ՏԻՆՔ

Բանախօսութեան նիւթ՝

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Բանախօսուի՝

ԶԷՅՆԷԲ ԹԱՇՔԸՆ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԻ

4 Յունիս 2014 Զորեքշաբթի զիշեր ժամը ճիշդ 8ին

Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

Միութեան Բացօթեայ ԳՈՒՐԵԱՆ Տանիքին վրայ

19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Ուսուցիչներն են, որ գիտեն
այն մասին, որ մեր
աշակերտների ուսումը պետք
է լինի համապարփակ,
պարունակի երաժշտություն,
արվեստ, գիտություն և
աշխատանքի
համար տեխնիկական
ուսուցում:

Նրանք գիտեն, որ
օրինաչափված քննությունը
պատասխանը չի:

Դպրոցները պետք է լավ
կերպով ֆինանսավորված
լինեն, որ հնարավորություն
ունենան պահպանեն քիչ թվով
աշակերտներ ունեցող
դասարաններ:

Եւ կոլեջը պետք է մատչելի
լինի բոլոր աշակերտների
համար:

Ուստի, եթե ձեր
շրջանի դպրոցի կամ
Կալիֆորնիայի ուսման
մասին հարց ունենաք,
հարցրեք որևէ



ՈՒՍՈՒՑԻՇԻԿ:

Հանրային դպրոցները
ավելի լավ Կալիֆորնիա
են կերտում բոլորիս
համար:

cta.org

Վճարված է Կալիֆորնիայի ուսուցիչների
միության կողմից



ՄԱՅԻՍ՝ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Մայիս, Արմէն-Հայ ցեղի մղած ճակատամարտերի յաղթանակների ամիս է, կուռի ու դիմադրական ոգու փառաբանման տուն է, հայոց աշխարհի վրայ անկախութեան խրախճանքի ծիածանացած տուն է: Տարին էր 1918, ամիսը Մայիս, գարուն էր հագել հայոց աշխարհը, նրա մեղմանուշ հովիկներն էին եկել համբուրելու հայրենի շէնքերի այգիներին վարուած ծիածանի լոյսը, նրա արտերի ցորեանի ծովակների հետ պար բռնում: Հայոց լեռների ձիւնտու ջուրն էր երգելով վագուտ, Արմէն-Հայերի հոգիների տաճարների ատրուշաններում վառուում էր նախնիների պատերազմի ու յաղթանակի աստուած՝ Վահագնի ոգու կրակը: Արեւն իր վարսերով գրկել էր երկիրն հայոց, ծաղկունքի ծիածան կապել հայոց լեռների լանջերին:

Տասնվեց դարեր առաջ, չորս հարիւր յիսուն մէկ թուականին, դարձեալ Մայիսին, Մամիկոնեան ցեղից քաջ ու հայրենաշունչ Վարդանը, նախարարներն հայոց վասն հայրենեաց ու վասն հաւատքի ճակատամարտեր էին մղել հօր տիրակալի դէմ: Վարդանը, հայոց աշխարհագորային գունդերով Ադուանաց աշխարհից գնում Արտագու գաւառի Աւարայրի դաշտի Տղմուտ գետի ափերին պատերազմելու՝ իրենց հաւատքը հայոց աշխարհին պարտադրող Պարսից զօրքի դէմ: Ադուանաց աշխարհում ճակատամարտել է պարսից առաջապահ մի զօրամասի հետ, պարտութեան մատնել նրան, շարունակել հայոց զօրքի երթը Արտագու գաւառի Աւարայրի դաշտի Տղմուտ գետի ափ:

Փողերի ու թմբուկների զարկերով, հայոց զօրքը, այգելոյսին անցնում գետի միւս ափ, չորս ուղղութիւններով ճակատամարտում պարսից զօրքի դէմ: Մարտական գործողութիւնների առաւելութիւնը հայոց զօրքի կողմն էր եղել, Վարդանը նկատելով մարտադաշտի չորրորդ ուղղութեան ընկրկումը, շտապում իր գունդով օգնութեան փութալու այդ ուղղութեան մարտին, մխրճում թշնամու Մատեան Գունդի շարքեր... խոցւում: Ճակատամարտի ղեկավարութիւնը զօհուած Վարդանի եղբորը վստահելու փոխարէն, ընկրկում է հայոց աշխարհի զօրքը, անկազմակերպ նահանջում: Պարտուել էր հայոց երկիրը, սակայն ոգեղէն հաւատքի յաղթանակի փառաւորում էր եղել: Անցորդները պատմում, որ իւրաքանչիւր Մայիսին այդ դաշտում նահատակների սրտերից ճառագած սպիտակ շուշաններ են ժպտում, գիշերները լուսնեակը այցի գալիս, սպիտակ անուշ դէմքը ցօղում նրանց լոյսով:

Դարձեալ Մայիս, հայոց բանակը, կամաւորական գնդերի քաջերի հետ, վռնտում էին թաթարներին հայոց արեւելեան կողմն աշխարհից, արեւին գրկած կրակ գոյներով հայոց դրօշը ազատութեան ծիածան փուռ ազատագրուած շէնքերի վրայ: Մայիսի 8-ի, լոյս 9-ի առաւօտեան ճրագալոյսին, հայոց զօրքը ու կամաւորական ջոկատները գրոհում էին անառիկ, անմատչելի թուացող բարձունքներին բազմած հայոց սիրուն ոստան Շուշի ազատագրելու: Կրակ էին տեղում, սրտերի վրէժի հուրը ժայթքում թշնամու վրայ: Առա-

ւօտ, արեգակն իր արդար լոյսի առաջին շողերով գրկել էր գէնքերը հայոց, յաղթանակի ցնծութեան ջահեր վառել մարտիկների սրտերին: Փախաւ թաթարը, դեռ պիտի փախնէր, պիտի վռնտէին նրան շատ հեռուներ՝ մինչեւ Մայր Արաքսի ափեր, իրենց գէնքերը հովացնելու նրա պաղ ջրերում: Չթողեցին հայոց զինուորին հասնելու Կուր գետ, որի միւս ափից ազնուագարմ Արտաշէս հայկազուն արքան, Ալլան Սաթենիկի մէջքն օղակելով, հայոց աշխարհին թագուհի էր բերել: Եւրոպայում, Ասիայում աշխարհի պատերազմն էր մոլեգնել: Ռուսաց թագաւորի զօրքը, զինուոր դարձած հայ շինականների հետ արշաւում դէպի Հայքեր, Վասպուրական, Տուշպա-Վան, նրա Այգեատանում կուռի ելած Արմէն-հայերին օգնութեան փութալու, Վանայ-Բզնունեաց ծովի ջրերից պայթած կղզեակի տաճարում հայոց գէնքի փառքին աղօթք մըմնջալու, նրա որմերի քարերին դրոշմած խաչանշանները գոռելու, քարացած Գագիկ արքայի արցունքները սրբելու: Սասունի Մհերը, Տուշպայի միջնաբերդի ժայռէ դուռը չէր պատուելու, որ դուրս պոռթկար լոյսին, արեւը նետէր թշնամու վրայ: Հայոց կուռի Վահագն՝ Քաջերի քաջ դիւցազուն Անդրանիկ փաշան, Դիլմանում ջախջախել էր թուրքի բազմահազարանոց զօրաբանակը, ուսի հետ յաղթական մուտք գործել Տուշպա-Վան: Այնտեղի այգեատանում, հայերը ծաղկազարդ ծառերը որպէս գէնքեր գրկած, կենաց կուռ էին տալիս թշնամուն: Զինուոր դարձած Ռուս շէկիկ տղաներ, հայ կամաւոր մարտիկներ գրկեցին նրանց, փառաբանեցին նրանց դիմադրութեան ոգին: Արեւմտեան կողմը հայոց աշխարհի լեռներին ու դաշտերին ազատութեան լոյսն էր շողում: Աշխարհի կուռ, հարիւր-հարիւր հազար հայեր նաեւ կուռ տուին Գերմանի զօրքին, հասան նրա ոստան, փլեցին այն: Ապարանցի ու հայոց աշխարհի շէնքերի զինուոր մարդիկ թմբուկ զարկին, «Քոչարի» պար բռնեցին, Ռայխստագի փլած որմերին գրեցին: Նորէն Ամիսն էր Մայիս:

Ռուսի երկրում նոր կարգեր, տապալել էին Ռուսի թագաւորի իշխանութիւնը, սպանել նրան: Իրենց տիրապետութեան յաղթանակի համար գիջել էին տարածքներ, գիջել էին ուսու զինուորի յաղթանակների փառքը: Արեւմտեան նուաճած երկրներից տուն էր վերադառնում ուսու յաղթական զինուորը: Փլուել էր Արեւմտեան Հայաստանի ռազմաճակատը: Հայերը կազմաւորել էին երկրապահ զօրամաս, առանձին դիմադրաւելու թշնամուն: Խախտելով Անդրկովկասի Կոմիսարիատ-ի հետ կնքուած զինադադարի պայմանագիրը, թրքական բանակները արշաւում էին արեւելք, միանալու ցեղակից թաթարներին, ապա դէպի թուրան, հիմնելու արեւելքի իրենց ցնորածին պետութիւնը: Ներխուժել էին Արարատեան դաշտ, Սարտարապատի ու Բաշ Ապարանի վրայով սպառնացել գրաւել Երեւանը: Նուաճողները սպանել էին հայոց շէնքերի անունները, դարձրել Սարտարապատ, Չկոտեմբերան: Հայոց շէնքում նորէն վառուել էին նախնիների իշխանների, դիւցազունների, իմաստունների, հին աստուածների լոյսը: Եւ հիմա, Սար-

տարապատ աւանը ու դաշտը հայոց Արամայիս արքայի քաղաքամայր Արմաւիրն է:

Դուշմանի նախաձեռնած յարձակումը՝ հայոց աշխարհի մայր ոստանին էր սպառնում, ողջակիզելու նաեւ արեւելեան կողմն հայոց աշխարհի շէնքերի արորդիներին: Գարեգինը, Յովսէփեան տոհմից, հրամայել էր մայր տաճարի գանգերը հնչել, հրամայել եօթ օրեր անդադրում դողանչէին հայոց աշխարհի բոլոր տաճարների գանգերը՝ կուռի կանչելու հայերին: Մայր Արաքսի ափերին Նոր Աւարայր՝ յանուն ցեղին սրտի զարկերի, յանուն ցեղի սերմին, յանուն յաղթանակի: Զօրքին հայոց կուռի տարան Նազարպէկեան, Սիլիկեան, Փիրումեան զօրապետները: Հայոց աւերուած ոստանների՝ Զէյթունի քաջորդիները, Սասնայ ու Մշոյ լեռնականները, Վասպուրականցիները, Յոյն Շնչուրը իր զօրքով ու թնդանօթներով, Եգիտի պեանկիր Ադան իր հինգ հարիւր այրուձիտով, Ղարաբաղի Փիրումեան զօրավարները իրենց լեռների դիւցազուններով ու մահապարտ գունդով, Արարատեան դաշտի ու Ապարանի զինուոր դարձած շինականները, իրենց գէնքի փառքին հաւատարիմ ուսու սպաներն ու զինուորները, հայոց երկրապահ զօրքը, Մայիսի քսան երկուսին առաւօտեան լոյսի ճառագայթները համբուրելով, գրոհեցին դուշմանի դիրքերի վրայ: Նրանք մրկածին գրոհայիններ էին, որոնք վրէժի կրակով պատուում էին թշնամու սրտերը, սրով եկածներին սրով գգեանում: Արմէն-հայերի հին աստուածներ՝ Միհրն ու Վահագն էին ելել հայոց քարէ սիրտ՝ Արեգաձեմ Լեառն Արարատի գագաթ, արեգակից ու եղէգից յառնած բոցերը նետում թշնամու վրայ: Վահագնը, երկնականարի ծիածանը պրկած որպէս աղեղ, ամպերում յառնած շանթերը որպէս նետեր տեղում դուշմանի վրայ:

Դուշմանը նաեւ Արագածի լանջեր ելել՝ թիկունքից խոցելու հայոց մայր ոստանը: Հայկի զարմից Ապարանցի շինականների կուռ էր, արգելակելու համար նրանց յարձակումը իրենց շէնքեր ու մայր ոստան: Նրանց կուռի էր առաջնորդում Ապարանի Արագիւղի շինական, յունական բանակի գնդապետ, Արսէն Սամսոնի Տէր-Պողոսեանը: Նա Բաֆֆի-ի «Խնեթ»-ի հերոս՝ Սամսոն Տէր-Պողոսեանի որդին էր, քաջին՝ քաջն էր ծնել: Ռազմաճակատի հրամանատարն էր՝ զօրավար Դրո Կանայեանը: Բոլոր շէնքեր իրենց որդիներին կուռի էին ճամբել: Դուշմանին յաջողուել էր ճեղքել ռազմաճակատի գիծը, երեք ուղղութիւններով յարձակման անցել: Մարտադաշտ հասած հայոց նոր ջոկատները, գրաւելով Քասաղ գետի ափերի բարձունքները կրակի տակ առել դուշմանի զօրքը, ստիպել նահանջել: Հայոց զօրքը շրջապատել էր նահանջող թշնամուն, փակել նրանց նահանջի ճանապարհը: Դուշմանը յայտնուել էր երկողմ կրակի տակ, ոչնչացուել էին նրա առաջապահ գունդերը, զօրքի մնացորդացը նահանջել: Արագածի լանջերի Ապարանի շինականների կուռը փրկել էր նրանց շէնքերի մարդկանց, ձախողել Երեւան մայր ոստանը թիկունքից նուաճելու դուշմանի ծրագիրը:

Փլուել էին Սարտարապատի ճակատամարտի ռազմի դաշտի դուշմանի դիրքերը: Դուշմանը խուճապահար փախնում էր: Ափսոս որ ընդհատել էին իրենց յարձակման

հեղեղը, թշնամու յետապնդումը կարող էր հասնել մինչեւ Կարսի բերդաքաղաք, նրա ամրոցում տօնելու յաղթանակի բերկրանքը, նրա հնամենի տաճարում փառաբանելու իրենց հին ու նոր աստուածներին:

Հայ արի մարդ, մի պահ փակիր ակներդ, անհայցիւր աշխարհից, զինուոր դարձած քեզ տար այդ ճակատամարտի բոցերում դուշմանին կուռ տալու: Արարատին որպէս վահան գրկած, Արագածի վրայ վառուող Արա աստուծոյ արեւի կանթեղը որպէս շանթ վեր պահած, պիտի տեսնես հայերը ինչպէ՞ս էին գրոհում դուշմանին: Պիտի տեսնես ինչպէ՞ս էին արեւը ցած բերել կուռի դաշտ, նրա կրակ ճառագայթներով այրում դուշմանի գէնքը, ոգին, ակները: Կուռի դաշտում պիտի տեսնես կարմիր վերարկուն հագած հրամանատար Դանիել-Բէկ Փիրումեանին, արեւի ճառագայթները որպէս նիզակ պարզած հայոց զօրքը գրոհի տանում: Մտի՛ր Պօղոս Փիրումեանի մահապարտների գունդ, մահ սփռիր քու առաջ, մենք շատ ենք մահ տեսել: Պիտի տեսնես ինչպէս էին Զէյթունցիների նօտյաները Քուրկիկ Պէլայի նման մուսուլման, ինչպէս էին Սասնայ ու Մշոյ դիւցազները իրենց Դաւիթի թուր կեծակին շողում դուշմանի վրայ: Պիտի տեսնես ինչպէս էին Յոյն Շնչուրի թնդանօթները փլում դուշմանի դիրքերը: Արմէն-Հայերի նախնիների հին աստուածներն էին իջել հայոց քարէ սիրտ՝ Լեառն Արեգաձեմ Արարատի գագաթից, Արա Արեւ աստուծոյ բոցերը նետում թշնամու վրայ: Վահագնը երկնականարի ծիածանը պրկած որպէս աղեղ, ամպերի շանթերը որպէս նետեր տեղում թշնամու վրայ: Մարտի դաշտում պիտի տեսնես դուշմանի վրայ սլացող հեծեալ զինուոր Յովհաննէսին, զինուոր դարձած Հայ իմաստուններ՝ Ակսելին, Ղափանցեանին, Մանանդեանին, Ղարիբեանին, Թօփչեանին: Եւ դու Հայ մարդ, ինչպիսի՞ հրճուանքով պիտի ակնատեսը լինես դուշմանի խուճապահար փախուստին: Եւ այդ օրը, Մայիսի քսան ութին, գնա՛ աղօթիւր Մայր Տաճարում, որտեղ աղօթել էին քու նախնիները արեւին, կրակին ու Յիսուսի լոյսին: Գնա՛ մայր ոստան, այրուիւր հայերի հրճուանքի բոցերում, բարեւի կանգնիր ռազմաճակատի յաղթական զօրավարներ՝ Նազարեթիկեանին, Սիլիկեանին, Դանիել ու Պօղոս Փիրումեաններին:

Պատերազմի դաշտում յաղթանակած հայերը, 1918 թուականի Մայիսի քսան ութին հայոց աշխարհը հռչակեցին անկախ պետութիւն՝ Հայաստանի Հանրապետութիւն: Արեւի քուրայի կարմիր կրակը շառագունեց նրա դրօշին՝ խորհրդանիշը Հայկական Բարձրավանդակի, հայ ժողովուրդի գոյատեւման մշտական պայքարի, Քրիստոնէական հաւատքի եւ Հայաստանի անկախութեան ու ազատութեան: Կապույտ՝ խորհրդանիշը հայ ժողովուրդի խաղաղ երկնքի ներքոյ ապրելու կամքը: Նարնջագոյնը՝ խորհրդանիշը հայ ժողովուրդի արարչական տաղանդի ու աշխատասիրութեան: Ո՞վ հայ մարդ, եթէ ունես հոգու երեւակալութեան ճախրանք, արդեօք չէ՞իր տեսնի նօտյաներին բազմած հայոց արքաները ինչպէս էին տողանցում զօրահրամանատարների ջոկատներին շառախուսների հետ, յաղթանա-

16 ԴԱՌՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ՄԱՐԴԸ ԱԻԵԼԻ ԱՍՈՒՐ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ

Դառն ճշմարտութիւններու ցանկ, զոր կարգալէ ետք հասկնալի կը դառնայ, որ կեանքը դիւրին զբօսանք է, սակայն փորձութիւններու իսկ գնով՝ մարդիկ կը դառնան աւելի ուժեղ:

1. Կեանքը ինքնին բաւական բարդ գործընթաց է, եւ միայն մեծ ջանքերն են որոնք մարդոց երջանկութիւն կու տան:

2. Ամէն ինչ է, որ կը յաջողի, եւ որքան շուտ կը հասկնանք գայն, այնքան արագ ոտքի կը կանգնինք:

3. Կան այնպիսի բաներ, որոնց մասին դուք չէք գիտեր: Դուք կը դադրիք սորվելէ աչն ժամանակ, երբ կը դադրիք ապրելէ:

4. Բազմ կու գայ, սակայն՝ ոչ բոլորի համար, այդ իսկ պատճառով ձեր ժամանակը հնարաւորինս ձիշդ կառավարեցէք:

5. Շատ բաներ դուք պարզապէս ընդունակ չէք կառավարելու, եւ անիմաստ է ամբողջ ներուժը ծախսել բանի մը վրայ, որ չէք կրնար ընել:

6. Հասարակ տեղեկատուութիւնը իրական գիտելիք չի համարուիր, անիկա կու գայ փորձի հետ: Որպէսզի դասեր քաղէք, դուք ձեզ պէտք է փորձութեան մէջէն անցընէք:

7. Դուք չէք կրնար յաջողակ ըլլալ, եթէ արժէքներ չունիք: Մի՛ պաշքարիք յաջողակ ըլլալու համար, աշխատեցէք գնահատել սորվելի:

8. Միշտ մէկը աւելի կ'ունենայ, քան՝ դուք: Կարեւոր չէ, թէ որքան ունիք, կարեւոր է, որ անընդհատ ձգտիք աւելին ունենալու:

9. Դուք չէք կրնար փոխել անցեալը, սակայն կրնաք կանգ առնել, վերարժեւորել անցեալը եւ փոխել աւարտը:

10. Միակ մարդը որ կրնայ ձեզ երջանիկ դարձնել, դուք էք: Ձեր երջանկութիւնը կ'արմատաւորուի ձեր անձին հանդէպ տածած ձեր վերաբերմունքէն:

11. Միշտ պիտի ըլլան մարդիկ, որոնք պիտի չհամակրին ձեզ, դուք չէք կրնար ամէն մէկուն համար արժէք ներկա յացնել: Թէ ինչ կ'ըսեն ուրիշները ձեր անձին մասին, ոչինչ կ'արժէ, ի տարբերութիւն անոր, թէ դուք ինչ կը մտածէք ձեր մասին:

12. Դուք չէք կրնար մշտապէս ստանալ այն, ինչ կը փափաքիք, սակայն եթէ շատ ուզէք, պիտի ունենաք այն, ինչ ձեզի համար անհրաժեշտ է:

13. Կեանքի մէջ կ'ունենաք այն, ինչին ձգտած էք եւ ջանացած, եթէ կը փափաքիք հարուստ եւ յաջող ըլլալ, սորվեցէք գնահատել:

14. Լաւ ընկերները կու գան ու կ'երթան, սակայն ոմանք միշտ ձեր կողքին կը մնան, եւ անոնք այն մարդիկն են, որոնց պէտք է գնահատել:

15. Ամէն օր զբաղելով միեւնոյն բանով՝ դուք կ'արգելակէք ձեր զարգացումը, ձեր աճը կ'երեւի ա՛յն ժամանակ, երբ դուք կը փոխէք ձեր կեանքը:

16. Դուք երբեք լիարժէքօրէն վստահ չէք ըլլար որեւէ նոր բան սկսելէ առաջ եւ փորձելով նորը՝ երբեք առաջին իսկ վայրկեանէն յարմարաւէտ չէք գգար դուք ձեզ:

ՔԱԼԵՆՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԾՆՈՒՆԴ Կ'ԱՌՆԵՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Քալելը ամէնէն հաճելի եւ ամէնէն դիւրին մարգածեւերէն մէկն է: Աշխատանքային ճնշումներէն ննչ, մտազբաղութենէն եւ յոգնածութենէն ձեր բազմապատուէրը համար մարդիկ յաճախ կը փափաքին քալել՝ թէկուզ քանի մը վայրկեաններ միայն: Քալելէ ետք թէ՛ մարմինը եւ թէ՛ ուղեղը կը թարմանան եւ կ'աշխուժանան: Կարգ մը մարդիկ կէսօրէ վերջուան քունին փոխարէն կը քալեն եւ նոյնքան դարմացած եւ վերանորոգուած կը զգան:

Սանթա Գլարա համալսարանի հետազոտներէն՝ Մարիլի Օբէյցո կ'ըսէ թէ բազմաթիւ մարդիկ յաճախ «կէս կատակով» արտայայտուած են թէ իրենց ամէնէն հետաքրքրական եւ լաւ գաղափարները կը յայտնուին քալած ժամանակ: Հաւանաբար պատահական չէ որ Պէթհոլմէնը ամէն օր ճաշէն ետք անպայման կը քալէր: Նոյնպէս նշանաւոր նորավիպագիր՝ Չարլզ Տիգլընը իր օրուան մեծ մասը կ'անցընէր քալելով: Չարլզ Տարուին եւս օրական անպայման երեք անգամ կը քալէր:

Քալելու եւ մտքի ստեղծագործութեան միջեւ կապը քննելու համար Օբէյցո եւ իր աշխատակիցները շարք մը փորձարկումներ կը կատարեն Սթէնֆորտ համալսարանի մէջ:

նին մէջ: Փորձարկումներէն մէկուն պարագային, մասնակիցները տուեալ աշխատանք մը կը կատարեն նստած ժամանակ եւ այլ նոյնաման աշխատանք մը՝ քալած ժամանակ: Այս փորձարկումի աւարտին ի յայտ կու գայ թէ քալած ժամանակ մարդիկ աւելի ստեղծագործութեամբ կը կատարեն տուեալ աշխատանքը:

Այս փորձարկումի ընթացքին, մասնակիցներու ստեղծագործութիւնը կը քննուի նախքան քալելը եւ քալելէ ետք՝ օգտագործելով Creative Thinking-ի յատուկ հարցարանը: Հետազոտները դիտել կու տան թէ քալելէ ետք մարդիկ աւելի բարձր նիշ արձանագրեցին Creative Thinking-ի քննութեան:

Օբէյցո եւ իր գործընկերները կը յայտնեն թէ անոնք ներկայիս անկարող են բացատրել թէ քալելը ի՞նչ ձեւով կը նպաստէ ստեղծագործութեան: Անոնք կ'ենթադրեն թէ քալելու կողքին, այլ ֆիզիքական դիւրին աշխատանքներ եւս կրնան ծնունդ տալ ստեղծագործ միտքերու: Գիտնականները կոչ կ'ուղղեն որ հոգեբանութեան ծիրին մէջ գործող հետազոտներ յաւելնելու ուսումնասիրութիւններ կատարեն մարմնի աշխատանքներու եւ ստեղծագործութեան կապին գծով: **ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ**

ԶՐՈՅՑԸ ԿԸ ՄԱՐԶԷ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Մասնագէտները կը պաշտպանեն այն տեսակէտը, որ նոյնիսկ 10 վայրկեան տեւողութեամբ գրոցը կրնայ դրական ազդեցութիւն ունենալ մարդու յիշողութեան եւ մտածողական ընդունակութիւններուն վրայ: Անոնք կը վստահեցնեն, որ գրոցը եւ հաղորդակցումը կը մարզեն յիշողութիւնը:

Հասարակագէտները հարցումներ տուած են տարբեր ազգի, ինչպէս նաեւ ամենատարբեր կրօնական դաւանանքներ կամ համոզումներ, կրթութիւն եւ ընտանեկան կարգավիճակ ունեցող 25-95 տարեկան գրեթէ 4000 մարդոց եւ առաջարկած յիշողութիւնը ստուգող գրաւոր լրացնել:

Պարզուած է, որ անոնք, որոնք աւելի անմիջական են, միւսներու համեմատ աւելի լաւ կրցած են յաղթահարել գրաւորի դժուար հարցերը: Փորձի երկրորդ մասով գանոնք բաժնած են երեք խումբի. առաջին խումբի մասնակիցները 10 վայրկեան գրուցած են իրարու հետ, երկրորդ խումբը խաչբառ լուծած է, իսկ երրորդը՝ հեռատեսիլ դիտած: Այնուհետեւ անոնց դարձեալ առաջարկած են մտածողութեան արագութիւնը եւ յիշողութիւնը ստուգող գրաւոր: Առաջին խումբի արդիւնքները եղած են ամենաբարձրը:

ԵՍ-Ի ԶԵԻԱՌՈՐՈՒՄԸ

«Ես» ըսելով կը հասկնանք անձի միասնութիւնն ու ամբողջականութիւնը անոր վերացական, ներքին կողմերով:

«Ես»-ը անհատ է, ինչպէս որ ինքը յայտնի է իրեն, ինչպիսին ան կը տեսնէ ու կը պատկերացնէ ինքզինք: Փաստօրէն «Ես»-ը անհատի վերաբերմունքն է սեփական անձին նկատմամբ: Այդ վերաբերմունքը իր մէջ կ'ընդգրկէ մարդու պատկերացումները իր անհատականութեան մասին, անոր հետաքրքրութիւններու, հակումներու, արժէքային կողմնորոշումներու որոշ միասնութիւնը, որոշ ինքնագնահատական եւ ինքնաչարգանք:

Երբեմն «Ես» հասկացութեան բովանդակութեան մէջ կը տարբերակեն՝

- 1. «Ես»-ի գգացողութիւն՝ անձի սեփական ապրումները իբրեւ գործունէութեան կատարող.
- 2. «Ես» հիմնադրոցի՝ անձի իր մասին պատկերացումները իբրեւ ինքնադիտման առարկայ.
- 3. «Ես» հասկացութեան մէջ կը դիտուին նաեւ հետեւեալ կողմերը.

- 1) ներկայիս «Ես»-ը (ինչպիսին կը տեսնեմ ես ինքզինքս ներկայ պահուն)
- 2) շարժուն «Ես» (ինչպիսին կը ձգտուի դառնալ)
- 3) երեւակայական «Ես» (ինչպիսին պիտի ուզէի ըլլալ)
- 4) իտէլյական «Ես» (ինչպիսին պէտք է ըլլամ՝ մեկնելով իւրացուած բարոյական եւ այլ չափանիշներէ)
- 5) ներկայացուելիք «Ես» (դիմակ, որ կը քողարկէ իսկական ապրումները):

Եթէ կ'ապահովուի «Ես»-ի միասնականութիւնը եւ կայունութիւնը, ուստի անիկա կը դառնայ մարդու կայուն վարքագիծի նախապայման: Երբ ատիկա կը բացակայի, «Ես»-ը կը շեղի, կը խանգարուի, անձը կ'երկատուի եւ կը քայքայուի, եւ անխուսափելիօրէն կը կազմալուծուի անոր գործունէութիւնը:

Անձի «Ես»-ը առաջին հերթին անոր ինքնագիտակցութիւնն է իր կառուցուածքային բաղադրատարրերով եւ հանդէս կու գայ իբրեւ անձի էական կողմ մը:

«ՀՐԱՇՔ ԸՄՊԵԼԻ»-Ն ԿԸ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂՅԿԵՂԻ ԴԵՍ ԵՒ ԿԸ ՎԵՐԱՑՆԷ ԲՈԼՈՐ ՑԱԻԵՐԸ

Ձինացի յայտնի սննդագէտը քաղցկեղով հիւանդներուն խորհուրդ կու տայ երեք ամիսներու ընթացքին օգտագործել խմելիք մը, որ կը պատրաստուի միրգերէ եւ բանջարեղէնէ:

Ըմպելին Ձինաստանի մէջ կ'անուանեն «հրաշք ըմպելի»՝ հիւանդութիւններու վրայ ունեցած իր ազդեցութեան շնորհիւ:

Անիկա հիւանդի խմելիք է եւ կը պատրաստուի շատ դիւրին: Պատրաստման համար անհրաժեշտ են կարմիր ճակնդեղ, խնձոր եւ ստեպլին՝ բոլորը թարմ վիճակով: Բոլորը պէտք է լուալ, կտրտել քառակուսիներով, ձգմել հիւթաքամիչով, աւելցնել քիչ մը ջուր եւ խմել հիւթը:

Այս հիւթը կ'օգնէ հետեւեալ պարագաներուն՝

- 1. Կը կանխէ քաղցկեղային բջիջներու աճը,
- 2. Կը կանխէ լեարդի, երիկամներու եւ ենթաստամոքսային գեղձի հիւանդութիւնները եւ կը բուժէ արդէն առկայ հիւանդութիւնները,
- 3. Կ'արմարացնէ շնչառական ուղիները, կը կանխէ սրտի նոպաները եւ կ'իջեցնէ արեան ճնշումը,

րը եւ կ'իջեցնէ արեան ճնշումը,

4. Կ'արմարացնէ դիմադրողական համակարգը,

5. Օգտակար է աչքերուն՝ կը հանէ կարմրութիւնը, չորութիւնն ու յոգնածութիւնը,

6. Կ'օգնէ նուագեցնելու մկանային ցաւերը,

7. Մարմնէն կը հանէ թոյները, կ'օգնէ աղիքներու աշխատանքի բարելաւման, կը բուժէ փորկապութիւնը,

8. Կը բուժէ փշտիկները եւ կը մաքրէ մաշկը,

9. Կը վերացնէ բերանի վատ հոտը,

10. Կը վերացնէ ամէն բնույթի ցաւ:

«Հրաշք ըմպելի»-ի այլ առաւելութիւններ՝

- 1. Չունի ոչ մէկ բացասական հետեւանք,
- 2. Շատ անդադար է եւ դիւրին իւրացող,
- 3. Շատ արդիւնաւէտ է նիհարնալու համար,
- 4. Դիմադրողական համակարգը կը կարգաւորուի արդէն երկու շաբաթէն:

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի
Երեկոյեան ժամը 10:00–ից 12:30
Կլէմտեյլի 380-րդ կայանից

ՌՈՒՄԱՆԱՐԱՅ ԹԵՍԸ

Շարունակում էք 13-էն

են իրարու միջեւ, միշտ սակայն հնագույն՝ Պուքարեստի թեմը աւելի հաստատ գաղութ մը ըլլալուն՝ առաջնորդողի դերը Ռումանահայ թեմը կատարած է: Ի վերջոյ սակայն 1812-ի Մայիսին Պուքարեստի մէջ կնքուած հաշտութեան պայմանագրով Բեսարաբիոյ թեմը Ռուս կայսրութեան ենթակայ եղած է, եւ նոյն տարին Քիշնեւի մէջ հաստատուած Բեսարաբիոյ առաջնորդական թեմը, որուն վերջին առաջնորդն էր Ներսէս Արքեպս. Խոզդովերդեան մինչեւ 1917 թուականը:

Գէորգ Ե. Սուրէնեանց Կաթողիկոսի (1911-1930) օրով տեղի ունեցաւ երկու թեմերուն վերջնական միացումը՝ 1920 թուականի Դեկտեմբերին, երբ Մայր Աթոռի լիազօր ներկայացուցիչ Յուսիկ Ծ. Վրդ. Զոհրապեան կարողացաւ վերահաստատել Ռումանիոյ միացեալ թեմը՝ Պուքարեստի Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ հովանիին տակ: Տարի մը ետք Ռումանիոյ պետական հրովարտակով թեմը ճանչցուեցաւ եւ Զոհրապեան Ծ. վարդապետ Մայր Աթոռի մէջ եպիսկոպոս ձեռնադրուելով 1922 Փետրուարին, հաստատուեցաւ որպէս թեմակալ Առաջնորդ Ռումանիոյ համայնքին, «Որն աւելի քան 500 տարուայ ընդմիջումից յետոյ ունենում էր իր պետականօրէն վաւերացուած եւ հոգեւոր իշխանութիւններէ կողմից ճանաչուած դեկավարը՝ յանձին Յուսիկ եպիսկոպոս Զոհրապեանի»:

Կրթական եւ Սշակութային օրագիրներ

Ռումանիոյ թեմը ինքնուրոյն վիճակի վերածելու միտումով Պուքարեստի մէջ դպրոցական ծրագիր մշակուեցաւ եւ Միսաքեան ազգային վարժարանը հիմնուեցաւ եօթնամեայ ուսումնական ծրագրով: Շուտով, 1926-ին, վարժարանի երկարկանի շէնքը կառուցուեցաւ եկեղեցւոյ կից բարերարուհի Մարիամ Քեսիմեանի ծախքով եւ զայն անուանեցին Միսաքեան-Քեսիմեան վարժարան: 1932 թուին վարժարանի աշակերտութեան թիւը հասած էր 405-ի՝ 16 ուսուցիչներով, որոնց կարգին էր 1929 թուականէն սկսեալ համալսարանաւարտ եւ Պուքարեստ ծնած՝ Լեւոն Կարապետ Պալճեան, որ պիտի չաջորդէր Յուսիկ Արքեպս. Զոհրապեանին որպէս Առաջնորդ Ռումանիոյ թեմին, եւ յետագային դառնար Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսը:

Թեմին Ներքին Կառոյցը

Առաջնորդ Յուսիկ եպիսկոպոս 1925 թուի սեպտեմբերին կը գրէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե. Սուրէնեանցին ներքին դժուարութեանց մասին, յատկապէս «Թեմիս քահանայութեան մեծագոյն մասին որ թերուս, կիսազրակար- դաց ըլլալով անհամապատասխան իւր բարձր կոչմանը»: Գործի վրայ եղող քահանաները, ըստ տեղեկագրին, Անատոլուէն գաղթեցին ու կը գործէին «իբրեւ վարձկան, այլ ոչ ընտրեալ

հովիւ», ինչը բերով Կաթողիկոսէն հայրապետական կոնդակով որոշ հրահանգներ եւ արտօնութիւններ ստանալ քահանաները խրատելու, յանդիմանելու եւ նոյնիսկ պատժելու: Առաջնորդին դիրքը աւելի կը գործնար երբ 1928-ի ապրիլին Ռումանիոյ թագաւորութեան «Դաւանանքի մասին» կոչուած օրինագիծը կը հրատարակուէր՝ ճանչնալով թեմը որպէս Հայ Լուսաւորչական եկեղեցին իբրեւ հնագույն պատմական եկեղեցիներէն մին, միւս դաւանանքներուն նկատմամբ հաւասար իրաւունքով:

Իր իրաւասու դիրքերէն մղուած Առաջնորդը կը կրկնէր իր դժգոհութիւնը երկու նամակներ գրելով Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նախագահ Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանցին, յոյս չաչտնելով որ շուտով թեմական կանոնադրութիւն մը մշակուէր աւելի հսկելու համար թեմի ներքին կարգ ու սարքին վրայ: Ան կ'առաջարկէր կա'մ Պուքարեստի մէջ հոգեւոր կրթարան մը բանալ, եւ կա'մ ամենը ընտրելով Երուսաղէմ դրկել քահանայից պատրաստութեան համար: Թեմի վերակազմակերպման գործին մէջ իր կարեւոր ներդրումը ունեցած է ապագայ Հայոց Հայրապետ որպէս ուսումնական դաստիարակ, երիտասարդաց դեկավար եւ խմբագիր:

Ռումանահայ Թեմի Կանոնագրութիւնը

1931 յուլիս 31-ի հրամանագրով Ռումանիոյ Նախարարական Խորհուրդը, Նիկոլա Եորգայի նախագահութեամբ, կը հաստատէր Թեմին Կանոնադրութիւնը, թեմը ճանչնալով որպէս «Լուսաւորչական հայերի հոգեւոր կենտրոն ընդունելով եպիսկոպոսական աթոռը»: Ըստ Կանոնադրութեան, թեմը կը բաղկանար երկրորդ տարբեր շրջաններուն մէջ գտնուող 22 հայ համայնքներէն Յուսիկ եպիսկոպոս Զոհրապեան ճանչնալով Առաջնորդ Թեմին որ «իւր հաւատարմութեան երդումը կ'ընէր Վեհապետին առջեւ եւ ի ներկայութեան գահաժառանգ իշխանին եւ վարչապետին»: Կանոնադրութիւնը կը շեշտէր թէ «Թեմը կը գտնուի Էջմիածնի դաւանական եւ կանոնական իրաւասութեան տակ՝ ինքնավար կերպով մատակարարելով իր գործերը»:

Կանոնադրութեամբ հաստատուած եւ պետական ճանաչում ստացած Ռումանահայ Թեմին չաջորդ Առաջնորդը՝ Վազգէն եպիսկոպոս Պալճեան կը ժառանգէր կազմակերպեալ եւ կանոնական հիմունքի վրայ հաստատուն թեմը ու զայն կը վարէր 13 տարիներ ամենալուրջ խոհեմութեամբ եւ մնայուն արդիւնքներով իր ուսմաներէն լեզուի գիտութեամբն ու համալսարանական ուսմամբ, երկար տարիներ ծառայելէ ետք հայ վարժարանին որպէս ուսուցիչ եւ հայ մշակութային համայնքին որպէս գործօն անդամ: Նախահամակարգ եղաւ անշուշտ Ռումանիոյ Առաջնորդին 1955 թուի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութիւնը որ երկար տարիներ գահակալեց որպէս Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. Մայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

ԹՈՒՐԻԱՅԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՔԻ Ե ԶԱՆՈՒԵԼ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆԻ ԳԻՐՔԸ

Շարունակում էք 14-էն

Հանենք, հանգիստ մնանք ու ապրենք, լաւ է», անձնականութիւն չունեցող հայեր են: Բացի դրանից՝ 3-4 միլիոնից աւելի հայ էլ կայ երկրում, նոյնիսկ Արեւմտեան Հայաստանի հողերի վրայ: Նրանք իսլամացած հայերն են:

Հարցում - Թաքնուած հայերը: Պատասխան - Եկէք նրանց իսլամացած հայեր ասենք եւ նրանց այդպէս ընդունենք: Այդպիսով, մենք կարող ենք կողք կողքի լինել, որովհետեւ մինչ այդ մենք հեռու էինք իրարից: Իրար մօտենալու պատճառն էլ Հրանդ Տինքի մահն էր: Այդ հայերն էլ ոտքի կանգնեցին՝ ասելով՝ էլ բաւ է:

Հարցում - Գիրքը թուրքերէն հրատարակուեց ապրիլի 24-ից մէկ ամիս առաջ: Ի՞նչ կը փոխի այն թուրքական իրականութեան մէջ:

Պատասխան - Այն, ինչ հիմա պէտք է ասեմ, պայմանաւորուած չէ քաղաքականութեամբ: Խորքում կարող են շատ բաներ լինել, օրինակ, անցեալում մի բան էի կարդացել եւ գիտէի, որ իրականութիւն է, քանի որ իմ շատ վստահելի մէկի գրած նիւթն էր, թէ հայերը որտեղ ինչքան թուրք են ջարդել: Դա կարդալուց յետոյ անմիջապէս ընդվզում եղաւ իմ մէջ: Հայերը չեն ջարդել թուրքերին, հայերը պայքարել են, այսպիսի բան առաջացաւ իմ մէջ: Երբ այդ ընդվզումն զգացի, այդ պահին հասկացայ թուրքի ընդվզումը՝ ոչ կառավարական, պետական, այլ հասարակ թուրքի: Մարդը կենքի մէջ բարի է եւ տեսնում է, թէ իր պայն ինչ ձեւերով է սպանել հայերին՝ մորթել, բռնաբարել, կտրել, ջարդել, եւ ընդվզում է, ասում է՝ ոչ, թուրքերն այդպիսի բան չեն կարող անել: Առերեսումը նման յանցագործութեան հետ շատ-շատ դժուար է:

Հարցում - Կը լինի՞ այդ առերեսումը:

Պատասխան - Պէտք է լինի: Թէեւ սխալ է այս ասածս, բայց հիմա արդէն ժողովուրդն ընդունում է, որ եղած է: Այդ 70 միլիոն ժողովուրդի մէջ թերեւս 1 միլիոնի հետ համագործակցութեան մէջ ենք:

69 միլիոն կայ. չգիտենք ի՞նչ կը լինի, ի՞նչ է ի լինի: Բայց ինչքան ճանաչում եմ թուրքերին, պետութիւնն այնպէս պէտք է անի, որ թեթեւակի անցնի այս ճանաչման հարցը: Խաղաղ ժողովուրդ են, չես կարող վստահել պետականօրէն: Ինքը ցոյց է տալիս, որ ինքը սա է, բայց լրիւ հակառակն է: Ընդհանուր կեցուածքն այս է:

Հարցում - Նկատի ունե՞ք թուրքիայի իշխանութիւններին:

Պատասխան - Այո, այո, իշխանութիւններին: Ճանաչման առջեւ արգելք լինելու պատճառներից մէկը, իմ կարծիքով, հայերի կալուածքներին տէր լինելն է՝ անշարժ կամ շարժուն կալուածքի տէր դարձան, իսկ ճանաչումն իր հետ պէտք է բերի փոխհատուցումը: Օդի մէջ ճանաչում. սա իմ ուզածը չէ:

Մենք միշտ պահում ենք այն յոյսը, որ թուրքիան ճանաչելու է Հայոց ցեղասպանութիւնը: Միեւնոյն ժամանակ շատ շիզոֆրենիկ վիճակի մէջ ենք. մի կողմից՝ հաւատում եմ, որ այդպէս կը լինի, միւս կողմից՝ վստահութիւն չունեմ, մենք շատ քիչ ենք, պիտի չկարողանանք, պիտի չարթուենք:

Հարցում - Ելք չկայ՞:

Պատասխան - Չգիտեմ, ես յուսեմ եմ, շատ յուսեմ, որովհետեւ ինձ խրախուսող քայլ դեռ չի անում պետութիւնը՝ սա է ասում, նա է ասում: Ես այնտեղ աշխատում եմ, տուրք եմ վճարում եւ դեռ չիսօսեմ: Եթէ Հրանդ Տինքը չմեռնէր, Սեւակ Պալլբէրն չմեռնէր... Սեւակ Պալլբէրի մահը հարուած էր մեզ համար: Տղաս հեռացաւ երկրից, ասաց, որ չի կարող ապրել նման երկրում, գիտուորութիւն անել: Ինչպէ՞ս վստահեմ երկրին, որ տղայիս գինուորութեան ուղարկեմ: Ի՞նչ իմանամ, թէ իմ տղային էլ նոյն բանը չի լինի: Ի՞նչ իմանամ՝ ինչ ասես արեցին՝ Հրանդ Տինքը եղաւ, Սեւակը եղաւ... Ու ես էլ ինչպէ՞ս վստահեմ այս պետութեանը: Թուրք պետութիւնը միշտ սնուցում է իմ յուսեմս հոգեբանութիւնը, ինչպէ՞ս լաւատես լինեմ:

ՇՆՈՐԱԿՈՐԱՆՔ

ՄԱՐԱԼ ԵՒ ՄԱՅՔԸԼ ԽՈՒՐԻ ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ
26 Ապրիլ 2014 Cobo St. Lucas եւ ընդունելութիւնը տեղի ունեցած է Լոս Անճելոսի մէջ հարազատներով եւ բարեկամներով:

«Մասիս» կը շնորհաւորէ բախտաւոր գոյգը, յատկապէս ծնողքը Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեանին:

Մարալ եւ Մայքըլ Խուրիի ամուսնութեան ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան կը շնորհաւորեն գոյգը եւ իրենց կը մաղթեն արեւշատ օրեր:

Առ այդ «Մասիս»ին կը նուիրեն \$200 տոլար:

Մարալ եւ Մայքըլ Խուրիի ամուսնութեան ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան կը շնորհաւորեն նորապսակ գոյգի հարազատները, յատկապէս ծնողքը Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեանին:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՇՆՈՐԱԿՈՐԱՆՔ

Շանթ եւ Կասիա Տինկիզեաններու ամուսնութեան առիթով «Մասիս» կը շնորհաւորէ ընտանեկան պարագաները, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գիրգորեաններուն:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէգեաններ արագ ապաքինում կը մաղթեն իրենց թոռնիկին՝ Նազարէթ Օհանեանին, արկածի փրկուելուն համար:

Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:





Ամառնային
Փառատոն
 Armenian Summer
FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By
 ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Sunday June 8, 2014
Barnsdall Art Park
HOLLYWOOD

4800 Hollywood Blvd Los Angeles, CA 90027
 Starting at 11:00 am

- Live Music**
- Dancing**
- Art work Exhibition** ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
- Kids Games** ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
- Armenian Food** ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
- ՀԱՄԱԴԱՄ ՀԱՇԵՐ

Sponsors



www.massispost.com

for more info please call
 vNor Serount Cultural Association
(818) 391-7938